№ 165 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 30 ՅՈՒԼԻՍԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 30 ՅՈՒԼԻՍԻ № 165

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Солемоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ
Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՏԱՐԱԶԸ“, լինելով միակ հայ իլլիւստրասիօնը Ռուսաստանում, հրաւիրում է հայութեան բոլոր խաւերին ուղարկել պատերազմին վերաբերեալ հայ զինուորական գործիչների, վիրաւորեալների, յաղթական մահով պսակված հերոսների, քաջարի մարտիկների, սանիտարական խմբերի, հիւանդանոցների, ռազմաբեմերի նկարներ և լուսանկարներ, հէնց սրանց ետևն էլ գրելով նկարի պարզ բովանդակութիւնը, հերոսի անունը և այլն։
առ. 13. 2—2

ԴԻՄՈՒՄ

Անհաշիւ թւով հայ փախստականների նոր հոսանքը
ԱՒԵՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ամեն կողմերից, առաջ է բերել ծով կարիքներ, որոնց բաւարարութիւն տալու համար Հայկ. Կենտ. Կոմիտէտը եւ Կ. Հ. Բարեգործ. Ընկերութիւնը դիմում են հայ հասարակութեան և խնդրում առատ նուէրներով օգնութեան հասնել քաղցած, մերկ ու հիւանդ փախստականներին նրանց թշուառ դրութիւնը թեթևացնելու համար։ Նուէրները ուղղել հետևեալ հասցէներով՝
1) Կոմիտէտի գանձապահին Тифлисскій Коммерческій Банкъ, Г. М. Цуриновy, 2) Կ. Հ. Բարեգ. Ընկ. Абасъ-Абадская пл. 7 և 3) «Հորիզոնի» խմբագրութեան։
առ. (2. ե.) 499. 3—1

Թիֆլիսի Ժողովարան
Այսօր, հինգշաբթի, յուլիսի 30-ին
Հայոց Դրամատ. Ընկերակցութեան արտիստների մասնակցութեամբ
կը ներկայացվի
Կրէչինսկիի հարսանիքը
կոմ. 3 գործ.
Սկիզբը երեկ. ժամը 8½-ին։
Տոմսակները՝ 1 ր. մինչև 30 կ.։
Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ կլուբի մուտքի համար վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները՝ 25-ական կոպէկ։
502. 1—1

Ալէքսանդրապօլի Իշխան Արղութեան-Երկայնաբազուկի անուան օր. միջնակարգ դպրոցի համար հարկաւոր են
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
համալսարանականներին 40-ական, իսկ դպրոցաւարտներին 30-ական րուբլի դասագնով։ Հոգաբարձութիւնը մտադրութիւն ունի երկու կարգի դասագինն էլ աւելացնել 5-ական րուբլով, եթէ այն՝ ծխական ժողովը հաստատի։
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
առ. 500 2—2

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՈԹՈՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՑԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր. 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29.
առ. (ա. օ.) 504. 100—1

ԱՐԴԱՐԱՑԻ ՉԷ

Մենք հաղորդեցինք, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը չէ կամենում կատարել Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակը, որով կարգադրված է թեմի մոմավաճառութեան արդիւնքից տարեկան 3000 ր. տալ Գայիանեան օրիորդական դպրոցին։

Հոգաբարձութեան առարկութիւնը, որքան մեզ յայտնի է, այն է, թէ թեմի մոմավաճառութեան ամբողջ արդիւնքը յատկացված է Ներսիսեան դպրոցին, իբրև թեմական դպրոցի, նախորդ կաթողիկոսների կոնդակներով, հետևաբար՝ օրինական և արդարացի չէ այժմ խլել այդ արդիւնքը Ներսիսեան դպրոցից և յատկացնել այլ դպրոցի։

Ըստ երևոյթին, այս առարկութիւնը հիմնաւոր է, բայց միայն՝ ըստ երևոյթին, իսկ ըստ էութեան միանգամայն անարդարացի է և անտեղի։

Եթէ դպրոցի հիմնադիր Ներսէս Աշտարակեցին յատկացրել է թեմի արդիւնքներից շատերը, դրանց թւում և մոմավաճառութեան արդիւնքը թեմական դպրոցին, դրա պատճառն այն է, որ այն ժամանակ դպրոցը իր գոյութիւնը պահպանելու համար չունէր եկամուտի աղբիւրներ։ Այդպիսի դէպքում միանգամայն հասկանալի էր կաթողիկոսների կարգադրութիւնը՝ թեմի զանազան արդիւնքները յատկացնել մի դպրոցի, որ կոչված է թեմի ամբողջ մտաւոր սերնդին դաստիարակել և կրթել։

Սակայն երբ Ներսիսեան դպրոցը, հետզհետէ զարգանալով, ձեռք բերեց նիւթական խոշոր ապահովութիւն և բարեկեցութիւն, շնորհիւ բազմաթիւ կտակների, անշարժ կալուածների, երբ նրա նիւթական բարգաւաճումը այն տեղն է հասել, որ այսօր նրա ուսուցիչները ամենից շատ առատ և մեծ ռոճիկներ են ստանում, երբ հոգաբարձութիւնը այնքան լայն միջոցներ ունի, որ չը բաւականանալով այդ մեծ ռոճիկներով՝ տալիս է իր ուսուցիչներին և զանազան նպաստներ, ինչպէս այս տարի ամեն մի ուսուցչի տուել է աւելորդ մի-ամսեայ ռոճիկ՝ ապրուստի թանգութեան պատճառով, երբ նրա ուսուցիչները—ինչպէս եղել են դէպքեր—նոյնիսկ գնացել են այլ տեղեր և երկար բացակայել և այնու ամենայնիւ ռոճիկը լրիւ ստացել,—այդ ամենը ցոյց է տալիս, որ նա ունի առատ միջոցներ ուստի և այլևս ոչ մի արդարացի և օրինաւոր հիմք չը կայ թեմի այս և այն արդիւնքը յատկացնել այդ դպրոցին այն ժամանակ, երբ թեմի միւս դպրոցները չեն կարողանում պահել նոյնիսկ խղճուկ գոյութիւն և երբ զանազան ծխական դպրոցների ուսուցիչները չեն կարողանում ստանալ ամիսներով իրանց խղճուկ ռոճիկներն անգամ։

Ինչ իրաւունքով և խղճմտանքով Ներսիսեան դպրոցի ուսուցիչները պէտք է ստանան և չաղ ռոճիկներ, և յաւելեալ նպաստներ, իսկ միւս դըպրոցների ուսուցիչները պէտք է անօթի մնան և իրանց փոքր ռոճիկն ևս չը ստանան։

Դա հակամանկավարժական և անարդար գործ է, որին վերջ պէտք է դնել։

Ուրեմն, բարոյական տեսակէտից, Կաթողիկոսի կարգադրութիւնը աւելի քան արդարացի և պատեհ է։

Մնում է իրաւական կամ իրաւագիտական կողմը։

Այդ կողմից ևս Կաթողիկոսի կարգադրութիւնը միանգամայն իրաւական և օրինական է։

Թեմի մոմավաճառութեան յատկացումը Ներսիսեան դպրոցին արդիւնք չէ որևէ կտակի։ Եթէ Կաթողիկոսը յատկացնէր Գայիանեան դպրոցին Ներսիսեանին կտակով տրված որևէ արդիւնք կամ գոյք, նրա այդ կարգադրութիւնը օրինաւոր չէր լինի, քանի որ կտակը անձեռնմխելի է։

Բայց Կաթողիկոսը փոխում է իր նախորդների մի վարչական կարգադրութիւնը։ Արդ՝ ամեն մի Կաթողիկոս կարող է փոխել նախորդ կաթողիկոսների այն որոշումները և կարգադրութիւնները, որոնք կանոնական բնաւորութիւն չունեն կամ եկեղեցական ժողովներով չեն կատարված, այսինքն օրէնսդրական ճանապարհով չեն կատարված։

Եթէ հոգաբարձութիւնը, որ դժբաղդաբար իրան դեմօկրատական է համարում, բայց հակադեմօկրատական վարմունք է բանեցնում, յամառի իր դիմադրութեան մէջ, Մողնու եկեղեցու ծխականները պարտաւոր են իրանց դպրոցին յատկացված իրաւունքը պաշտպանել և համապատասխան միջոցներ ձեռք առնել։

Հ. Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 յուլիսի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Յուլիսի 26-ին Բասէնի հովտում թիւրքերի բոլոր յարձակումները ետ են մղված ամբողջ զօրաճակատի վրա։

Յամառ կռիւ է Մերգեմիր սարի համար, որ գրաւեցին մեր զօրքերը, չը նայելով թիւրքերի կատաղի գրոհներին։ Թշնամին անկարգ նահանջում է դէպի հարաւ։

Եփրատի ուղղութեամբ մեր զօրքերը, նեղելով նահանջող թիւրքերին, կռւով տիրացան Փալան-թեօքեանի դիրքերին, խլեցին երկու թնդանօթ իրանց ռմբերային արկղներով, մեծ քանակութեամբ փամփուշտներ, զէնքեր, հեռախօսային կայարաններ, ուղտերի կարաւանը և գերիներ, որոնց թւում հետևակ գնդի հրամանատարին և չորս օֆիցէր։

Մեր զօրամասերը, հալածելով թիւրքերին, վերցնում են գերիների նորանոր խմբեր։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՑՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

29 յուլիսի

ԱԹԷՆՔ.—Այսօր առաւօտեան անգլիական մի սուզանաւ Դարդանէլում ջրասուզեց թիւրքաց «Խայրէդդին-Բարբարոսսա» զրահակիր նաւը։ Նաւաստիների մի չնչին մասը փրկվեց։

—

(Լրագիրներից)

◆ Բուխարէստի մեր թղթակիցը գրում է մեզ յունիսի 22-ից. «Այսօր վստահ աղբիւրէ իմացած ենք, թէ Սվազի մէջ 5 և Երզրումի մէջ 7 հայ դէմքեր կախաղան բարձրացած են։ 20 հոգի Կ. Պոլսոյ մէջ, թիւրքական պատերազմական մինիստրութեան դիմաց։ Այն 20 հոգիներուն մէջ կան և ուսանողականներ»։

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են, որ Թիւրքիայում ամեն օր պատրաստվում են 1300 ռումբեր։

◆ Աթէնքից գրում են, որ անատոլիական ափերում լողում են մեծ թւով հայերի և յոյների դիակներ։

◆ Սմիւռնում սկսվել է հայերի կոտորած։

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կովկասեան գլխաւոր շտաբի հաղորդագրութիւնից երևաց, որ թիւրքերը վերջերս նորից փորձեցին յարձակումն գործել կովկասեան ճակատի վրա։ Ապրիլի 18-ին Դիլմանում ջարդ կրած Խալիլ-բէյի զօրքը, նոր ուժեր հաւաքելով և մօտ երկու կորպուս կանոնաւոր զօրք ժողովելով, բազմաթիւ հեծելազօրքի հետ, յարձակումն սկսեց Մանազկերտի ուղղութեամբ դէպի Ալաշկերտ և Կարա-Քիլիսէի ուղղութիւնը ռուսական զօրքի վրա։ Թիւրքերը կարողացել էին նշանաւոր ուժեր կենտրոնացնել և այդ յարձակումը գործել, որ ստիպեց մեր ուժերին՝ նոր համախմբումներ և տեղափոխութիւններ կատարել վերոյիշեալ դիրքերի վրա։ Շտաբի վերջին հաղորդագրութիւններից երևում է, որ մեր զօրքերի գործողութիւնները Ալաշկերտի ուղղութեամբ աջողաբար զարգացան, և թիւրքերը, չը դիմանալով մեր զօրքերի գրոհին, սկսեցին նահանջել լայն ֆրօնտի վրա։ Իսկ վերջին հաղորդագրութիւնը յայտնում է, որ թիւրքաց զօրքը մեծ պարտութիւն է կրել Մերգեմիրի լեռնանցքում (Ալաշկերտի մօտ), որ գրաւել են ռուսները. բացի դրանից՝ ռուսները գրաւել են Փալան-Թեօքենի դիրքերը։ Ուրեմն Խալիլ-բէյի նոր յանդուգն յարձակումը և արշաւանքը՝ ընտիր և բազմաթիւ զօրքերը յետ է կասեցված։

—

Մասնաւոր տեղեկութիւնների հիման վրա, ռուսական զօրքը, ռազմագիտական նկատումով, թողել է Վանը յուլիսի 19-ին, բայց հայ կամաւորները և զինված ժողովուրդը մնացել են և պատրաստ են ինքնապաշտպանութեան։ Շուտով սպասվում է ռուսական զօրքի վերադարձը։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

29 յուլիսի

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ռիգայի մօտ ընկած ճանապարհներում յուլիսի 27-ի գիշերը մենք աջողութեամբ ետ մղեցինք գերմանացիների մի քանի յարձակումները, չը նայած որ ծանր թնդանօթները աջակցում էին նրանց։ Նոյն գիշերվայ և օրվայ կռիւներից յետոյ Դվինայի ուղղութեամբ, Շենբերգ-Պոնեմուն-Վիլկոմիր շրջանում թշնամին մեր գրոհի առաջ սկսեց ետ քաշվել, որի ժամանակ մեր ձեռքն ընկան մօտ 100 գերի, մի քանի գնդակացիր և պայթուցիկ արկղներ։ Նարեվի զօրաճակատում, Լոմժայի, Սնեադովի և Օստրովի ճանապարհների վրա յամառ կռիւները շարունակվում են։ Նովոգեօրգիևսկի դէմ գերմանացիների սկսած յարձակումը, Վիսլայի ձախ ափի երկարութեամբ, ետ մղվեց մեր արտիլերիայի կրակով։ Լիւբլինի և Խոլմի ուղղութեամբ թշնամին յուլիսի 27-ին յարձակում կատարեց, որը, չը նայած նրա կատաղի լինելուն, կանգնեցվեց մեր կողմից։

Վլօդաւի ճանապարհներին աջողութեամբ ետ մղվեց թշնամու յարձակումը, որի ժամանակ հակառակորդը գործ էր ածում խեղդիչ գազեր։ Դնեստրում, Ստրիպա գետի ակունքի շրջանում, աւստրիացիները յուլիսի 26-ին դիմեցին մասնակի յարձակման. կռիւը շարունակվում է։ Մեր զօրաճակատի մնացած մասերում խոշոր ընդհարումներ չեղան։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ստացված տեղեկութիւնների համաձայն, Կովնոյի ռմբակոծութիւնը, որ գերմանացիները ձեռնարկել են յուլիսի 26-ին, հետևեալ վիճակի մէջ է. Թշնամին ռմբակոծում էր մեր ամրութիւնները Պեպլէ գիւղից սկսած մինչև Ֆելիզինտալ՝ Եսը գետի վրա։ Թշնամու պաշարող արտիլերիան ռմբակոծութիւնը սկսեց կէս. գիշերից յետոյ. Թշնամին բանեցնում էր ամեն տեսակի մեծութեան թնդանօթներ մինչև 16-դիւյմանոցը։ Թշնամու ուրագանային կրակը տևեց 2 ժամից ոչ պակաս, որի ժամանակ նրան եռանդուն պատասխանում էին մեր մարտկոցները։ Ժամը 3-ի մօտերը կրակող զօրասիւները խիտ շղթայով շարժվեցին մեր դիրքերի վրա։ Կենտրոնացած կրակով, փուգասների արձակմամբ, այնուհետև մեր քաջարի զօրքերի հակայարձակումով հակառակորդը առաւօտեան ժամը 6-ին ետ մղվեց յարձակման ամբողջ զօրաճակատում։ Ուժասպառ գերմանացիները, կրելով չափազանց կորուստներ, թափվեցին մօտակայ ձորերը, ուր, ըստ երևոյթին, սկսեցին կարգի բերել իրանց՝ պատրաստվելու նոր յարձակման։

Յուլիսի 26-ի կէսօրից թշնամու կրակը ուժեղացաւ նորից։ Չը նայած այդ եռուն գործունէութեան տևականութեան, թշնամու հզօր թնդանօթների աւերիչ ուժին, մեր զօրքերը կայուն կերպով դիմացան թափվող ռումբերին։ Մեր արտիլերիան քաջաբար պաշտպանեց իր հերոսներին։ Այսպէս անցաւ ամբողջ օրը։ Մութն ընկնելուն պէս, մեր դիրքերի առջև կուտակված թշնամու զօրասիւները նորից նետվեցին յարձակման։ Վերջինը տևեց 2 ժամ։ Հակառակորդին աջողվեց տիրել առաջապահ դիրքերի գծերը, որ իր կրակը ոչնչացրել էր, բայց այնուհետև հերոսական ջանքերով, եկած զօրքի օգնութեամբ, գերմանացիները այս անգամ էլ ետ մղվեցին իրանց համար խոշոր կորուստներով։ Թշնամու ձեռքին մնացին միայն Պեպլէ գիւղի մօտի ամրութիւնները, որը նրան մեծ ջանքեր ու կորուստներ նստեց։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

29 յուլիսի

ՓԱՐԻԶ.—Ամբողջ ռազմաճակատի վրա օրը համեմատաբար խաղաղ անցաւ։ Արտուայում թնդանօթային կռիւներ էին տեղի ունենում Սոմմի և Ուազօ միջև ու Էն գետի հովտում։ Ռէյմսը ռմբակոծութեան ենթարկվեց։ Արգօններում Ֆօնտեն-օ-Շարմի ուղղութեամբ թշնամին փորձ արեց տիրանալու մեր դիրքերին, բայց ամենուրեք ետ մղվեց։ Վօգէզներում սովորական թնդանօթաձգութիւն է։ Օդային նաւատորմը՝ բաղկացած 32 թռչող գործիքներից՝ ռումբերի պաշարով, նաւատորմի պաշտպանութեան վրա հսկող գործիքների ուղեկցութեամբ, ուղևորվեց Սաարբրիւկէնի կայարաններն ու գործարանները ռմբակոծելու համար։ Մթնոլորտային պայմանները բարեյաջող էին։ Հովիտները ծածկված են մշուշով, երկինքն ամպամած է, բայց այնու ամենայնիւ, չը նայելով ուղղութիւնը որոշելու դժուարութեանը, 28 օդաչու գործիքներ հասան իրանց նպատակին ու նետեցին 164 հատ ռումբեր այլ և այլ մեծութիւններից։ Պահնորդ գործիքները հարկադրեցին գերմանական գործիքներին, որոնք աշխատում էին արգելք լինել մեր նաւատորմի արշաւանքին, փախուստի դիմել։

ԼՕՆԴՕՆ.—Ֆելդմարշալ Ֆրենչը յայտնում է. «Յուլիսի 19-ին երկու կողմի արտիլերիան էլ գործունէութիւն ցոյց տուեց Իպրից դէպի հիւսիս և արևելք, ըստ որում աջողութիւնը մեր կողմն էր։ Այսօր առաւօտեան, մեր արտիլերիայի աջող կրակից յետոյ, որին ֆրանսիացիները ձախ թևում եռանդուն աջակցութիւն ցոյց տուին, մենք ռմբակոծեցինք Գուժի մօտի դիրքերը, որ բռնել էր թշնամին յուլիսի 17-ին, և այդ բոլոր դիրքերը ետ վերցրինք, որի ժամանակ մեր աջողութիւնն ընդարձակելով՝ մենք առաջացանք Գուժից դէպի հիւսիս և հարաւ, լայնացնելով մեր զօրաճակատը մինչև 1200 եարդ։ Մենք գերի ենք վերցրել 3 օֆիցէր, 124 զինուոր և խլել ենք 2 գնդակացիր»։

ՓԱՐԻԶ.—Ցերեկվայ պաշտօնական հաղորդագրութիւն.

«Արտուայում, Սուշէի կայարանից դէպի հիւսիս, գերմանացիները գիշերը երկու յարձակում գործեցին, բայց ետ մղվեցին իրանց դիրքերը։ Արգօններում, Դորէի արևելեան մասում, արտիլերիական և հրացանային հրաձգութիւն է հետևակ մասերի միջև, բայց ընդհարումներ չը կան։ Վօկուայում կռիւներ եղան ձեռքի ռումբերով։ Թշնամին Լեպրետրի անտառում յարձակում գործեց երէկ երեկոյ, բայց կանգնեցվեց մեր կրակով։ Գիշերը նոր յարձակումը ռմբակոծութիւնով և խեղդիչ գազերով, նոյնպէս կանգնեցվեց մեր արտիլէրիայի կողմից։ Գիշերը Վօգեզներում անցաւ հանգիստ։

ՊԱՐԻԶ.—Պուանկարէն Պարիզից դուրս եկաւ շաբաթ օրը և վերադարձաւ այսօր առաւօտեան Բելֆօրի վրայով, այցելելով զօրքերին Վօգեզներում և էլզասում, ուր ազգնաբնակութիւնը նրան դիմաւորեց ջերմ համակրանքով։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 յուլիսի

ՀՌՈՄ.—(Պաշտօնական) Կադօրնա, Վերին Կօմիլիկայի շրջանում մեր զօրքերը ամրացան Օնդիէշի սարի կատարում։ Կարնիում մեր զօրամասերից մէկը, որ պաշտպանում էր Ֆրեյկօֆելի ու Պայլգրանտէի միջև եղած Կաբալօ կիրճը, յուլիսի 25-ին առաւօտեան յարձակում գործեց դիմացի աւստրիական խրամատների վրա և մաքրեց այդ շրջանը թշնամուց։ Վերջինս մութն ընկնելուն պէս մեծ ուժերով փորձ արեց նորից տիրանալու դիրքերին, սակայն ետ մղվեց մեծ կորուստով։ Մեր զօրքերը Պլավայի ռազմասահմանում գրաւեցին թշնամու մի քանի խրամատները Զագօրի-Պալէերօյի ուղղութեամբ, ուր միջոցին խլեցին ռումբեր, գրանատներ ու մետաղէ ռումբեր։ Ռազմական գործողութիւնները Կարսօյում զարգանում են մեզ համար բարեյաջող։ Թշնամին երէկ նորից էր ռմբակոծում Մօնֆալկօնէի նաւաշինարանը, որտեղ կրկին անգամ հրդեհ ծագեց, որը, չը նայելով թշնամու թնդանօթային կրակին, հանգցրին։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

29 յուլիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Ֆինանսների մինիստրը մինիստրների խորհուրդը մտցրեց ժառանգական տուրքերը բարձրացնելու մասին եղած օրինագիծը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Զինուորական վարչութիւնը հոգ տանելով ստացած վէրքերի և վնասուածքների պատճառով ծառայութիւնից արձակվող զինուորների վիճակի մասին՝ մտածել է մի շարք միջոցներ, այդ անձանց զանազան պաշտօններ տալու զինուորական և քաղաքացիական հիմնարկութիւններում։ Քաղաքացիական հիմնարկութիւնները այդ հարցին վերաբերվել են համակրութեամբ և իրանց ենթակայ հաստատութիւններում պէտք է տեղ տան վիրաւոր զինուորներին՝ ծառայական պաշտօններ։ Զինուորական մինիստրութեան մէջ նաև մատնանշված են մի շարք պաշտօններ վիրաւոր և վնասված զինուորների համար։ Բացի այն անձից, որ ունի որևէ կրթական ցենզ և ընդունակ է առաւել պատասխանատու պաշտօնների, պէտք է նշանակվեն ուրեադնիկներ և գիւղական գրագիրներ, ըստ որում գիւղական գրագիրներ պատրաստելու համար Պետրօգրադում բացվում են առանձին դասընթացներ։ Սակայն, նախատեսնելով որ ազատ պաշտօններ կառավարական հիմնարկութիւններում կարող են անբաւարար լինել, զինուորական վարչութիւնը դիմում է բոլոր քաղաքային և զեմստվային, կօօպերատիվ հիմնարկութիւններին, առևտրա-արդիւնաբերական նախաձեռնութիւններին և մասնաւոր անձանց խնդրելով իրանց մօտ եղած պաշտօնները տալ վիրաւորված և վնասված զինուորներին։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ռօձեանկօն այսօր գնաց Ցարսկոյէ-Սէլօ և ընդունվեց Թագաւոր Կայսրի կողմից։ Ունկնդրութիւնը շարունակվեց 55 րոպէ։ Ռօձեանկօն բաղդ ունեցաւ Նորին Մեծութեանը ներկայացնելու զեկուցում Դումայի աշխատանքի ընթացքի մասին։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Нов. Вр.» գրում է. «Մեր հրաժարվելը Կօցկի ուղղութեամբ ճակատամարտը ընդունելուց՝ ունեցաւ ռազմական ահագին նշանակութիւն։ Եթէ յիշեալ ուղղութեան վրա մեր զօրքերը մնային նոյնիսկ մի օր, այն ժամանակ Մակենզէնի զօրաբանակը կը կարողանար դուրս գալ Վօլդավեան ուղղութեան վրա ու խզել Բրեստ-Լիտօվսկ տանող ճանապարհները։ Ռազմական պարփակումի գործողութիւնները փշրվում են մեր հակաշարժումներին ընդհարվելով»։

◆ «РѢЧЬ»-ը ասում է. «Պարզվեց, որ շտապողական յարձակումների սիստեմը անգործադրելի է այնպիսի ուժեղ բերդերի նկատմամբ, ինչպէս են Կօվնօն և Օսովեցը։ Քանի որ յարձակումները ընդհատված են, պէտք է կարծել ուրեմն, որ թշնամու բոլոր ձեռնարկութիւնները յիշեալ բերդերի դէմ դատապարտված են անյաջողութեան։ Մեր նահանջի շարժումները Կօվնօ, Գրօդնօ, Բրեստ-Լիտովսկ գծի վրա շարունակվում են անարգել ու կատարելապէս հանգիստ, ուժեղ հակայարձակումների ուղեկցութեամբ»։

◆ Գերմանիան վճռել է ամբողջ Լեհաստանում մտցնել ծխախոտի մենավաճառութիւն։

◆ «Standard» լրագրում գնդապետ Մօօտ յուլիսի 17-ին, երբ պատերազմական տեսութեան մէջ ի միջի այլոց հետևեալ թւական տեղեկութիւններն է տալիս Գերմանիայի ու Աւստրիայի կորուստների մասին։ «Գերմանիան ու Աւստրիան այս մի տարվայ պատերազմում կորցրել են ոչ պակաս, քան 8.000,000 հոգի (5 միլիօն Գերմանիան և մօտ 3 միլ. Աւստրիան), որից 1.500,000 ը գերի են ընկած և մօտ 2.500,000 սպանված, իսկ վիրաւորներից շատերը շուտ չեն կարող վերադառնալ զօրաշարքերը։ Ռուսաստանի տաքտիկական նահանջներն էլ աւելի կը թուլացնեն Գերմանիայի ուժերը, նախ՝ ընդարձակելով կռւող զօրքերի ճակատը և երկրորդ՝ գործածութիւնից դուրս ձգելով ահագին քանակութեամբ պաշարողական թնդանօթներ»։

◆ Լրագիրները հաղորդում են, որ ֆինանսների մինիստր Բարկը մօտ ժամանակներս մեկնում է խորհրդակցութեան դաշնակից պետութիւնների մինիստրների հետ։

◆ «Р. Ут.»-ն հաղորդում է, որ թշնամին Վարշավա է մտել առ. ժամը 10-ին երաժշտութեամբ։

◆ Բիզայից հեռագրում են, որ գերմանական տաուբէն Կօվէլի վրա նետեց վեց ռումբ։ Վնասվողներ չեն եղել։

◆ Բուխարեստից հեռագրում են, որ թիւրքերը Բուլգարիայի պահանջները չափազանց են գտնում։ Սառնութիւն է տիրում յարաբերութիւնների մէջ։ Մակեդօնիայում բողոքի միտինգներ են լինում Բուլղարիային զիջումներ անելու դէմ։

◆ Արևմտեան ռազմաճակատում գերմանացիք գրել են 95,000 գնդակացիր։

◆ Գերմանիայի և Հոլլանդիայի յարաբերութիւնը սրվում է։

◆ «Б. В.» անպայման հաստատ աղբիւրներից հաղորդում է, որ Վիլհելմ կայսրը դանիական թագաւորի միջոցով հաշտութիւն է առաջարկել Ռուսաստանին։ Նրան տրված է վճռական բացասական պատասխան։

◆ Իրան արդարացնող գրութեան մէջ, որ պատրաստում է Սուխոմլինովը Պետական Դումային ներկայացնելու, նա բացատրելու է Դումային, որ անպատրաստութեան պատճառը հանդիսանում է միջոցների և Ռուսաստանի յետամնացութիւնը։

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

Պարիզ, 20 յուլիս

Իտալիոյ պատերազմի դաշտը նետուելէն քիչ յետոյ Պարիզի Հայկական Մասնախմբի նախագահն ու քարտուղարը ներկայացան իտալական դեսպանին պ. Թիթթօնիին և Պարիզի հայոց կողմէ յանձնեցին 3000 ֆրանկի նուէր մը իտալական Կարմիր Խաչին համար, և հետևեալ ուղերձը ուղղեալ Իտալիոյ Թագաւորին.

«Ն. վ. Վիկտոր Էմմանուէլ Գ.
«Թագաւոր Իտալիոյ.

«Տէր արքայ,

«Ձեր վեհափառութեան կուղղենք Պարիզի հայ գաղութին ամենէն սրտագին և ամենէն խանդավառ մաղթանքները՝ այն փառաւոր պայքարին մէջ, զոր իտալական ազգը ձեռնարկած է, ձերդ վեհափառութեան դիւցազնական ղեկավարութեան տակ, բռնութեան լուծին ներքև հեծող իր զաւակներն ազատելու համար։

«Մեր ժողովուրդին համար պարտականութիւն մըն է յայտնել, այսպիսի հանդիսաւոր րոպէին մը մէջ, այն սքանչացման և երախտագիտութեան զգացումները, զոր մենք կը տածենք իտալական ազնիւ ազգին հանդէպ, որ մեր ազգն ու մեր դատը միշտ պատուած է իր վեհանձն համակրութեամբ։

«Մեր Կիլիկիոյ թագաւորութեան օրերէն սկսեալ, բարեկամական յարաբերութիւններ Հռոմը, Վենետիկը, Ջենովան կապած են Փոքր-Հայաստանի քաղաքներուն հետ, որ այն ատեն ազատ էին։ Մխիթարեանց կաճառը զարգացած է Վենետիկի մէջ, շնորհիւ այն վեհոգի հիւրընկալութեան, զոր իտալական ազգը շնորհած է անոր, և շնորհիւ գեղեցկութեամբ լիալիր իտալական միջավայրին. և գրական ու ազգային այդ մեծ վառարանը, հայ ազգին փոխանցելով իտալական գեղեցիկ կուլտուրային կենսատու կրակը և իտալական հայրենասիրութեան հրավառ շունչը, հզօրապէս նպաստած է մեր ժողովրդի մտաւոր ու բարոյական վերածնութեան։ Եթէ, այն զազրելի սարկութեան ծոցէն, զոր թիւրք բռնապետութիւնը մեր վզին բեռցուցած էր, մեր ժողովուրդը կարողացաւ վերականգնիլ, նոր գրականութիւն մը հիմնել, արուեստագէտներ, բանաստեղծներ ու ազգասէր մարտիկներ արտադրել, ատիկա մենք պարտական ենք ոչ միայն մեր անցեալին դասերուն, այլ և այն դասերուն, զոր Իտալիան, ինչպէս և իր ազնիւ քոյրը՝ Ֆրանսան, մեզ շնորհեցին։ Ու մենք միշտ յուզեալ երախտագիտութեամբ մը պիտի յիշենք սքանչելի դերը, զոր կատարեց Հալէպի իտալական հիւպատոս պ. Էնրիկօ Վիթթօ՝ Զէյթունի 1895-ի դիւցազներգութեան մէջ, և այն հօյակապ գիրքը, զոր ան գրեց Տաւրոսի հերոսական հայաքաղաքին վրայ՝ ամենէն վեհանձն ու ամենէն թանկագին մեծարանքներէն մին է, զոր եւրոպացի մը մատուցած ըլլայ մեր ազգին։

«Մեզի համար հպարտութիւն մըն է տեսնել, բռնութեան դէմ մղուած այս հսկայ պատերազմին մէջ, դարաւոր պայքարներով ու տառապանքներով հիմնուած ու տասանորդուած մեր հինաւուրց ժողովուրդը, որ անգամ մը ևս կը մաքառի ու կը տառապի՝ ազատութեան դատին համար, Դանտէի, Հիւգօյի, Շէքսպիրի և Տօլստոյի ազգերուն հետ կողք-կողքի։

«Կը խնդրենք ձեր վեհափառութենէն, որ հաճի ընդունիլ արտայայտութիւնը մեր խորին շնորհապարտութեան և մեր ջերմեռանդ հիացման հանդէպ լուսաշող Իտալիային, որուն կընկերանան մեր ամենէն հրավառ մաղթանքները այս ազատագրական սուրբ պայքարին մէջ»։

Պարիզի Հայկական Մասնախմբի ներկայացուցիչները յայտնեցին նաև իրենց երախտագիտութիւնը այն կորովի միջամտութեան համար, որով Կ. Պոլսոյ իտալական դեսպանը Հայաստանի կոտորածներուն դէմ բողոքած է Բ. Դրան մօտ և անոնց դադարումը պահանջած։

Պր. Թիթթօնի, խորապէս զգացուած, յայտնեց իր շնորհակալութիւնները և խոստացաւ հասցնել ուղերձը Իտալիոյ Թագաւորին ու Պարիզի հայոց նուէրը՝ իտալական Կարմիր Խաչին։

Գ. Մ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԽԱՌՆՎԷՔ

Կարդացի Գ. Զալխուշեանի բաց նամակը ուղղված Մաքսիմ Կովալեվսկիին։ Կարդացի և զարմացայ։

Մարդիկ խառնվում են այնպիսի գործերի մէջ, որոնց մասին շատ հարևանցի և շատ մակերեսութային գաղափար ունեն։ Մարդիկ համարձակվում են յանձն առնել ազգային կամ հասարակական այնպիսի պատասխանատու դերեր, որոնց կատարումը յամենայն դէպս վեր է նրանց ուժերից և որոնց մասին նրանք ոչ մի լիազօրութիւն չունեն։

Եթէ մի վայրկեան ենթադրենք, որ պ. Մաքսիմ Կովալեվսկին կարող է այնքան թեթևամիտ լինել (որ, ի հարկէ, անհաւականալի է), որ ականջ դնէ պ. Զալխուշեանին և յանձն առնէ հայ-վրացական կամ հայ-թիւրքական յարաբերութիւնները շտկողի պաշտօնը, ես կամենայի իմանալ, թէ ինչ կարող է անել նա։ Մի մարդ, որ բոլորովին անտեղեակ է կովկասեան գործերին և իր կեանքում երբէք չի հետաքրքրվել մեր երկրի քաղաքական վիճակով և ոչ էլ ներքին հասարակական խնդիրներով, ուր մնաց հայ-վրացական կամ հայ-թիւրքական յարաբերութիւններ։

Ես հասկանում եմ պ. Գ. Զալխուշեանի տրամադրութիւնը։ Իբրև անկեղծ հայրենասէր, նա ցաւում է, տեսնելով դարաւոր հարևանների միջև տիրող փոխադարձ գժտութիւնները, և անկեղծ փափագում է այդ գժտութիւնները վերջացած տեսնել, բայց իւրաքանչիւր խելացի հասարակական գործիչ նախ քան որևէ գործի միջամտելը՝ պարտաւոր է չափել ու կշռել իր ուժերը և այնպէս ասպարէզ գալ։ Այլապէս, նրա ասպարէզ գալը կարող է լինել և ծիծաղելի և վնասակար։

Ներկայ դէպքում պ. Զալխուշեանը արջի ծառայութիւն է մատուցանում մեզ՝ կովկասեան հայերիս, և այդ ծառայութիւնից մենք բացէ ի բաց հրաժարվում ենք։

Գ. Զալխուշեան ապրում է Կովկասից հեռու։ Հայ-վրացական և հայ-թիւրքական յարաբերութիւնների մասին նրա ունեցած տեղեկութիւնները այնքան խորը չեն, որ նա իրաւունք ունենայ քննիչի կամ մանաւանդ դատաւորի դեր կատարելու։ Բացի այդ, իբրև հրապարակախօս կամ հասարակական գործիչ նա յայտնի է միմիայն հայ շրջաններում, այն էլ ոչ այնքան ընդարձակ շրջաններում։ Վրացիների և թիւրքերի համար նրա անունը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ մի անծանօթ հնչիւն։ Չէ որ նրանք կարող են ասել՝ «ով է այդ մարդը, որ խօսում է յանուն հայութեան»։

Ես վախենում եմ՝ չը լինի թէ նոյն հարցը տայ և ինքը պ. Կովալեվսկին. «ով էք դուք»։

Ոչ, պ. Զալխուշեան, ի սէր Աստուծոյ, ինչ բանի կամենաք խառնվել՝ խառնվեցէք, բայց հանգիստ թողէք հայ-վրացական և հայ-թիւրքական յարաբերութիւնների խնդիրը։

Մենք մեր յարաբերութիւնները՝ թէ վրացիների և թէ թիւրքերի հետ կարող ենք շտկել առանց ձեր միջամտութեան։ Առանց նոյն իսկ որևէ մի օտարի միջամտութեան։ Յամենայն դէպս պ. Մաքսիմ Կովալեվսկին չէ, որ կարող է մեր ներքին գործերը կարգադրել։ Եւ ահա ինչպէս վրացիներն են ասում, ասում ենք և մենք. «Մենք կարիք չունենք օտար դատաւորների դռները ծեծելու»։

Շիրվանզադէ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Ինչպէս հաղորդել էինք, Էջմիածնի Գլխ. Կարգադրիչ Յանձնաժողովի նիստում, որ կայացաւ յուլիսի 18-ին, Նպաստամատոյց Ընկ. լիազօրների մասնակցութեամբ, որոշված էր, որ բոլոր կազմակերպութիւնների լիազօրները և գործակալները սկզբում օգնեն ընդհանուր լիազօր Խորէն եպիսկոպոսին՝ բերելու փախստականներին Իգդիր ու Էջմիածին, և ապա, երբ փախստականները տեղաւորվեն զանազան շրջաններում, ամեն մի ընկերութիւն կամ կազմակերպութիւն կարող է վերցնել իր համար մի շրջան՝ որոշ քանակութեամբ փախստականների և պահպանել իր միջոցներով.

Այդ առիթով՝ երէկ Նպաստամ. Ընկ. փոխ-նախագահ Հ. Առաքելեանի անունով Երևանից, Խորէն եպիսկոպոսից, ստացվեց հետևեալ հեռագիրը. «Նպաստամատոյցի մասնախումբը այսօր, յուլիսի 28-ին, մեկնեց Ներքին-Ախտա, որ հանգուցային կէտ է Նոր-Բայազէտի, Դարաչիչագի, Դիլիջանի շրջանների համար։ Խնդրեմ կարգադրել՝ ստանալու Գլխաւոր Կոմիտէտից Նպաստամատոյ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻԼԱՅԷԹՈՒՄ

Պատերազմից դեռ եօթն տարի առաջ Էրզրումի մէջ իրար ետևից յեղափոխութիւններ առաջացան, որոնք կազմակերպված էին միւսլիմանների կողմից։ 1906—7 թ. Կարմիր Համիդի օրով այնպիսի ճնշումների տակ էր մորմոքում Էրզրումի ժողովուրդը, ոչ միայն հայը, մանաւանդ թիւրքն ու թիւրքացածը—որ տրամադրված էին ամեն միջոցի դիմելու, որպէսզի կարողանան զէնք վերցնել բռնութեան դէմ և ազատվել այդ սոսկալի տանջանքներից։ Լրտեսների վոհմակները «Ըլըզը-քէօշկին» թիկունքները դէմ տուած՝ կատարում էին, ինչ որ կամենում էին։

Բերդի կոմէնդանտ Կարա-Մէհմէդ գնդապետը Էրզրումի մէջ դարձել էր մի երկրորդ սուլթան և ոչ միայն մահվան սպառնալիքի տակ կողոպտում էր ունեւորների քսակները, այլ շատերի գեղանի կիներին, աղջիկներին տանում էր իր բնակարանը, լկտում և վերադարձնում տէրերին։ Այնպիսի ահաբեկիչն էր դարձել այս կոմէնդանտը, որ այլ ևս կարիք չը կար Կարմիր-Համիդի անունը տալ. բաւական էր մէկին սպառնալու համար կոմէնդանտի անունը տալ, կոմէնդանտի ականջին հասցնել նրա ըմբոստութիւնները, այլ ևս էժան չէր ազատվի ամբաստանվածը։

Որքան հոգի որ հայերից կամ յոյներից կողոպտված, կեղեքված, բանտարկված, կախված կամ գլխատված էին, այդ տանջանքներին տասն անգամ աւելի ենթարկված էին Էրզրումի միւսլիմանները։ Տառապանքն այն աստիճանի էր հասած, որ երանի էին տալիս հայերին և ասում էին.

— Հազար անգամ աւելի լաւ չէր լինի, որ մենք էլ զէնք բարձրացնէինք, կռւէինք Համիդի բռնութեան և մեր ազատութեան համար, քան թէ անմեղ՝ այս տանջանքները կրէինք անգութ բռնաւորների ձեռքից։

Կոմէնդանտը Էրզրումի մէջ թիւրք գեղեցկուհի չը թողեց, որ չը քաշէր իր ապարանքը, թիւրք հարուստ չը մնաց, որ չը կողոպտէր։

Բնականաբար այս սոսկալի վիճակը չէր կարող երկար տևել։ 1907 թ. Պարիզից Կովկասի վրայով Էրզրում մտաւ ռուսական անցագրով Ջէրքէզ-Ալին, որը Կ. Պոլսում և ապա Պարիզում կրթված մի լէզգի էր։ Ջէրքէզ-Ալին Սաբահ-Էդդինի կուսակիցն էր, խիստ ապակենտրոնացման (ադէմի մէրքէզիէթ) նուիրված և թիւրքական բանակում ծառայած, հարիւրապետի աստիճանի հասած մարդ էր նա։ Նա Կ. Պոլսից փախել էր Կարմիր-Համիդի սպառնալիքից, որը վճռել էր այս լէզգիին Մարմարայի ձկներին կեր ուղարկել, բայց ժողովրդի բարեբախտութեան բաժակն այնպէս էր լցված, որ Ջէրքէզ-Ալիի նման յեղափոխականները հրաշքներ գործեցին և սթափված ժողովրդին ըմբոստութեան ճանապարհը սովորեցրին։ Էրզրումի թիւրքերի բոլոր ցոյցերի ծրագրողը, ու կազմակերպողը Ջէրքէզ-Ալին եղաւ, որին ժողովուրդը իր կատարած քաջագործութիւնների համար Հասան-Թօսուն էլ էր կանչում։

Ջէրքէզ-Ալին ամբողջ վեց ամիս Դաղըստան էր կացել, ծառայել էր լէզգիների աուլներում, որ սովորի նրանց լեզուն, նիստ ու կացը, որպէսզի չը մատնվի։ Նա այլևայլ շալեր, մորթիներ, հայելիներ, պօտնոսներ և ուրիշ մանր-մունր իրեր էր բերել Էրզրում ծախելու և այնքան էժան էր ծախում, որ նրան միշտ շրջապատում էին թիւրքերն ամեն դասակարգից։ Ջէրքէզ-Ալին անվերջ խօսում էր, խայթում ծաղրում էր, ծիծաղեցնում և ուշքի էր բերում ունկնդիրներին, այնպէս որ նրանք անվերջ խորասուզվում էին, երբ հեռանում էին այդ տարօրինակ վաճառականի մօտից։

Ջէրքէզ-Ալին, յենված՝ ռուսական անցագրին և հիւպատոսարանին, ազատ մտնում էր ամեն տուն և հիմնարկութիւն։ Նա անկեղծ խօսում էր, քարոզում էր ամեն տեղ և սթափեցնում ժողովրդին։ Մզկիթներում այնպիսի ջերմեռանդ միւսլիման էր ձևանում, այնպէս էր աղօթում և քարոզում, որ ունկնդիր մոլեռանդ միւսուլմանները նրանից օրինակ էին վերցնում։ Հրապարակներում քարոզելիս ժողովուրդը մօտենում էր որպէս իր անձնուէր բարեկամին և լսում էր խիստ լարված մաքով և ուշադրութեամբ Ջէրքէզ-Ալիի ամեն մի խօսքը։ Ոստիկաններն ու լրտեսները թէև նրան հետամուտ էին, բայց ժողովրդի ահից և ռուսական հիւպատոսի միջամտութիւնից վախենալով ետ էին քաշվում։

Ջէրքէզ-Ալին իր այդ քարոզութիւնով ոչ միայն մտերմացաւ փաստաբան Սէյֆուլլահի հետ, այլ ժողովրդի միջից լոյս աշխարհ հանեց Նաջըբ-Աքիֆի նման յեղափոխականներ, որոնք անձնուիրաբար սկսեցին ղեկավարել Էրզրումի թիւրքերի յեղափոխութիւնը։ Ոչ միայն բանակալ կոմէնդանտի գլուխը կերցին, այլ 1907-ին մի օր լոյս ցերեկով փողոցի մէջ մահակներով այնքան ծեծեցին ոստիկաններին, որ 9 հոգու մահակի տակ սպանեցին և ստիպեցին կառավարչական շրջաններին խոնարհվելու ժողովրդի ուժի առաջ, յարգելու ազգաբնակութիւնը։ Այնքան եռանդով առաջ տարաւ Ջէրքէզ-Ալին իր քարոզութիւնը, որ պատրաստված էր կրկին անգամ Թիֆլիս վերադառնալ, ապրանք գնել, Պարիզից ուղարկված բրօշիւրներ, թերթեր և ուրիշ նիւթեր տանել և վերադառնալ իր գործին Էրզրում։

Կարմիր Համիդը երկու անգամ, 1907—8 թ., փոփոխեց Էրզրումի վալիներին, բայց Ջէրքէզ-Ալին այնպէս էր ժողովրդին սթափեցրել, որ այդ բանակալներն էլ հնար չը գտան ազգաբնակութեան սրտից դուրս քաշել յեղափոխականի ցանած սերմը։

Թէև Ջէրքէզ Ալիին լաւ ճանաչող բռն. բաշի Հիլմի-բէյը մատնեց, կալանաւորել տուեց նրան, որին Էրզրումում 5—6 ամիս տանջելուց յետոյ տարան Կ. Պոլիս, բայց այդ տանջանքները երկար չը տևեցին։

Ջէրքէզ-Ալին Էրզրումում բարձրացաւ ատեան, խոստովանեց բոլոր արածները հրապարակով և յայտնեց իր իսկական անունը առանց վախենալու և ասաց.

— Կարող էք ինձ սպանել, բայց իմ գաղափարներն արդէն ժողովրդի սեփականութիւնը դարձան, այդ չէք կարող դուրս քաշել նրա սրտից։ Մի թշուառ ամբոդրգի Ալիից գնեցի 40 ռուբլով արտասահմանի ռուսական անցագիր, որով այստեղ մտայ, որ ազատ քարոզեմ։ Ես նպատակիս հասայ, և խնդրում եմ ռուսական հիւպատոսից, որ խիստ պատժել չը տան այդ թշուառին, քանի որ նրան հրապուրեցի փողով և գործել տուի այդ յանցանքը վեհ գաղափարներ տարածելու համար։ Ես իմ պարտքս կատարեցի և ապացուցեցի, որ ժողովուրդն այս գաղափարներն իւրացնելուց յետոյ այլևս ետ չի մնայ իր շարունակելիք ուղիից։

Թէև կարմիր Համիդը իր քսակից 30 ոսկի էր ուղարկել, որ նոր տարազ հագցնեն, ճանապարհի ծախս տան և այնպէս Կ. Պոլիս հասցնեն յեղափոխական քարոզչին, որ կարողացել էր մի տարվայ ընթացքում Էրզրումի թիւրքերին այդ աստիճանի ազատութեան վառ մարտիկներ դարձնել, բայց Ջէրքէզ-Ալին դրանով չը կաշառվեց և այնքան եռանդով շարունակեց Սաբահ-Էդդինի քարոզած ադէմի-մէրքէզիէթի (ապակենտրոնացման) գաղափարները, որ Էրզրումը սահմանադրութեան վերահաստատումից մինչև մեր օրերը յեղափոխական և Իթթիհադի հակառակորդ մնաց։

Երբ Համիդին գահից իջեցրին և խալիֆի բարձին բազմեց Մահմէդ V-ը, Ջէրքէզ-Ալին Էրզրում եկաւ անմիջապէս, երեսփոխան ընտրվեց Սէյֆուլլահ փաստաբանի հետ և վերադարձաւ Կ. Պոլիս՝ շարունակելու այն վսեմ գործը, որի պատճառով քիչ մնաց կեանքը տար։ 1900 թ. Էրզրումի միւսլիման ազգաբնակութիւնը այնպէս իւրացրեց ապակենտրոնացման գաղափարները, որ Իթթիհադի բանակալներն էլ 1914 թւին չը կարողացան նրանց ստիպել դաւաճանելու Սաբահ-Էդդինի կուսակցութեան։ Այսօր ոչ միայն Էրզրում քաղաքը, ամբողջ նահանգը մնաց Իթիլաֆի (ապակենտրոնացման) կուսակից և մինչև վերջը հակառակորդ իթթիհադականներին, մանաւանդ Էնվէր-փաշայի օդային ամրոցներին և եղեռնական ձգտումներին։ Ոչ միայն Էրզրումի ժողովրդի ստորին, միջին և ազնուական դասակարգերը հակառակորդ մնացին իթթիհադականներին, այլ և զինուորական կուսակցութեան ամենախոշոր անդամները մինչև վերջը իրանց բոլոր ուժով դիմադրեցին իթթիհադականներին։ Երբ Էնվէր-փաշան Էրզրում եկաւ և առաջ բերեց իր ծրագիրը—Օլթի մտնել, Սարըղամըշը Օլթիից բաժանել և ապա կերպով Ճորոխի ափերին տիրել, ապա Սարըղամըշից Կարսի վրայով Թիֆլիս անցնել—IX կոր-օրդուի հրամանատար Ահմէդ-Ֆէվզի փաշան, որ նոյնպէս մի լէզգի է, այնպէս հակառակվեց Էնվէրի ծրագրին, որ պարտաւորված էր հրաժարվելու, որպէս զի իր բանակը հակառակ իր համոզման առաջնորդելու և կոտորել տալու պարտաւորված չը լինի։

Իսկ Ահմէդ-Ֆէվզի փաշաներն ու զօրականները քիչ չէին Էրզրումում և շրջակայքում, բայց գերմանական գայթակղութեան առաջը չը կարողացան առնել։ IX կոր-օրդուն ևս Սարըղամըշի անտառում սառեց, կոտորվեցին մնաց, ինչ վիճակի որ ենթարկվեց ու X և XI կոր-օրդուները։ Թէև իթթիհադականներն իրանց ձեռքն ունենալով մինիստրական պորտֆէյլները և սուլթանի արքունիքը՝ ամեն ճնշում գործ դրին և շարունակում են, որպէս զի ընկճեն իթիլաֆականներին, բայց Ջէրքէզցին պատկանող դրամը։ Մասնախմբի հետ գնում է Նոր-Բայազէտի հայր գործակալը՝ օգնութիւն ցոյց տալու և աջակցելու։ Ախտայի վրայով գալու են առայժմ 25,000 փախստական։ Տեղաւորումից յետոյ Նպաստամատոյցի մասնախումբը կը ստանայ Քանաքեռի շրջանը՝ 6000 փախստականներով»։

—

Էջմիածին, 28 յուլիսի

. . . .

Անընդհատ գալիս են փախստականներ, մեծ մասամբ հիւանդներ՝ ամենը անօթի։

Տէր-Թուրինեան

—

Մ.-ի հովտից Թիֆլիս են եկել մօտաւորապէս 15 հայ ընտանիք փախստական, որոնք տեղաւորված են Օրթաճալայի հայոց Մերանաւոր եկեղեցու շէնքում։ Փախստականներին բժըշկական խնամք տանում է բժ. Բ. Աղասարեան։

—

Թիֆլիսի հայոց առաջնորդը Պետրօգրադից Պետ. Դումայի պատգամաւոր Միք. Պապաջանեանից ստացել է հետևեալ հեռագրերը. 1) «Ստացայ Բագրատ եպիսկոպոսի սարսափելի հեռագիրը, որ յանձնեցի Դումայի նախագահ Ռօձեանկօյին։ Վաղը կայցելեմ Գօրեմըկինին։ Երկուշաբթի Դումա ենք մտցնում օրինագիծը փախստականների մասին։ Խնդրում եմ հեռագրէք մանրամասն՝ փախստականների թւի մասին և ստացված ու ծախսված մասնաւոր ու արքունական գումարների մասին»։ 2) «Ներքին գործերի մինիստրը Դումայի յանձնաժողովի մէջ ասաց՝ «Փախստականներին օգնելը պետութեան պարտականութիւնն է», և խոստացաւ օրինագիծ մտցնել 10 օրից յետոյ»։

—

Մոսկվայի ռուս արդիւնաբերողները երկու շաբաթվայ ընթացքում իրանց շրջանում յօգուտ Թիւրքահայ փախստականների հաւաքել և Մոսկվայի հայկական կօմիտէտին են յանձնել 40,000 րուբլի։

—

Նոյն կօմիտէտը ռուս վաճառականութիւնից և այլ առևտրականներից ստացել է մօտ 20,000 րուբլի նոյն նպատակի համար։

—

Վաղարշապատ, 23 յուլիսի

Սրանից 7 ամիս առաջ սկսվեց հայ գաղթականութիւնը Թիւրքիայից դէպի Ռուսաստան։ Այսօր նորից սկսվել է գաղթականների հոսն դէպի Էջմիածին ու Երևան։ Եօթն ամիս էր, ինչ սայլերի ճռվռոցն ու դրանց շարանն իրանց մերկ, հաշմանդամ, որբ ու ամուսին, կոյր բեռներով դադարել էին սրտի կըրծիչ ճառագայթների և անձրևների տակ ճանապարհորդելուց։ Այսօր նորից այդ շարանները կտրելով ահագին ճանապարհ, կտրելով Մասիս լեռան շղթան՝ եկան տեղաւորվելու Արարատեան դաշտում։ Սրանց դրութիւնը և առողջութիւնը սոսկալի է։ Շատերը նման են ուրուականների, շատերը խօսել դժուարանում էին. այնպէս էր ազդել քիւրդական բարբարոսութիւնը, որ ապշել էին։ Կային երեխաներ, որոնք բոլորովին զուրկ էին ոչ միայն ծնողներից, այլ նոյնիսկ համագիւղացիներից ու հարազատներից։ Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը շատերին տեղաւորեց իրանց անասուններով անտառում, վանքի բակում և զօրանոցում։ Զօրանոցում եղածներին կառավարիչ է կարգված Վահան ք. Աղազադեանը, որը բոլորին—մօտ 500 հոգու—թէյ, շաքար, հաց է բաժանում. իսկ բժ. Օ. Տէր-Ստրաւթինեանի ցոյց տուած հիւանդներին բաժանում է մածուն և դիւրամարս կերակուր։ Մաքրութեան մասին խիստ հսկում է զօրանոցում յիշեալ քահանան։ Ամէն օր թէյից յետոյ երկու մեծ կաթսաներով ջուր է տաքացնում և բոլորին՝ թէ գլուխները և թէ շորերը լուանալ տալիս։ Շատերի գլուխները, որոնք լի էին միջատներով ու անիծով, խուզել է տալիս։ Ամէնայն օր գալիս է գաղթականութիւնը և ցրվում գիւղերը և Երևան։

Թղթակից

—

Կենտրոնական Կոմիտէտի նիստը

Յուլիսի 26-ին, երեկ. ժամը 8-ին, առաջնորդարանում կայացաւ Հ. կօմիտէտի նիստը, ուր սրբազան առաջնորդը զեկուցեց թէ ի նկատի առած հայ ժողովրդին հասած վերջին սոսկալի աղէտը և գաղթականական մեծ հոսանքը և այն հանգամանքը, որ մեր տեղական ժողովուրդն էլ անտեսապէս քայքայված է և իւրովսանն չէ կարող խնամել այդպիսի մեծ թւով փախստականներին, դիմել է Կովկասի փոխարքային, որպէսզի գաղթականների հոգսը կառավարութիւնը իր վրա վերցնի և բաց թողնի մի որոշ գումար։ Փոխարքան սիրալիր ընդունելով սրբազանի առաջարկը, խոստում է տալիս անմիջապէս դիմել մինիստրութեանը կարևոր գումարը բաց թողնելու։

Երկար առարկութեան նիւթ է դառնում գաղթականների համար առանձին բնակարաններ կառուցանելը, սակայն ի նկատի ունեցած մեծ ծախսը, աւելի քան կէս միլիօն րուբլի և նպատակին չը ծառայելը, որոշվում է բնակարանների վրա ծախսելիք գումարը տալ տեղական այն բնակիչներին, որոնք իրանց յարկերի տակ կընդունեն յիշեալ փախստականներին և այն որպէս բնակարանների վարձ։

Նիստում կարդացվեցին Պետ. Դումայի անդամ պ. Պապաջանեանի հեռագիրները, որոնցով ցաւ յայտնելով հայութեանը հասած նոր դժբաղդութեան մասին, յայտնում է թէ ներքին գործերի մինիստրը խոստացել է օրէնսդրական կարգով Պետ. Դումա մտցնելու կառավարութեան հայ փախստականներին օգնելու պարտաւորութեանց մասին։ Այնուհետև կարդացվեցին Բագրատ եպ. և կոմիտէտի լիազօրների հեռագրերը գաղթականական հոսանքի և նրանց ծանր կացութեան մասին։ Գործը լուրջ և ծանրակշիռ լինելով, մանաւանդ որ կոմիտէտի լիազօրները և սանիտարական խմբերը արդէն սկսել են գործել Իգդիրի և Երևանի շրջաններում, որոշվում է խնդրել նախագահ պ. Ս. Յարութիւնեանին անմիջապէս ճանապարհվել Էջմիածին, Երևան և Իգդիր և տեղն ու տեղը կարգադրութիւններ անելով տեսնվել նաև Նորին Վեհափառութեան հետ Նրա հրահանգութիւնն ևս առնելու համար։ Պ. Նախագահին յանձնարարվեց Մանազկերտի շրջանի համար ուղարկված 10,000 րուբլի գործադրել Ռուսաստանի սահմանները հասած գաղթականների համար, իսկ Կաղզւան փոխադրվեց 2000 րուբլի։

Թիֆլիս հասնող գաղթականներին որոշվեց կենտրոնացնել քաղաքիս որոշ վայրերում՝ Միրանաւոր, Շաւնաբաթ և Թելէթ, հնար եղածին չափ աշխատելով կանոնաւորել նրանց նիստն ու կացը և սննդի խնդիրը։

Զեկուցվեցին հետևեալ նուիրատուութիւնների մասին. 1) Բուխարէստի հայուհեաց կօմիտէն նուիրել է 4 արկղ կօշիկներ, 2) Կովկ. Դեղատն. Ընկ. ծառայողները բժշկական պարագաներ, 3) Բատալպաշինսկի հայկական կօմիտէն 350 ր., 4) Մերվի կօմիտէն 700 ր.։ Որոշվեց յայտնել շնորհակալութիւն։

—

Շուշուց Մելիք-Շահնազարեանը հեռագրում է. «Փոխարքայի կարգադրութեամբ Ջիւանշիրի և Շուշու գաւառներում զետեղվում են 24,000 փախստականներ։ Անհաջող հունձի պատճառով անհրաժեշտ է փախստականներին օգնել հացով»։

—

Իգդիրից՝ լիազօրներ Շարաֆեան և Աբովեան հեռագրում են. «Տեղս հասաւ Վանի օտրեադը, ամեն օր հասնում են տասնեակ հազարաւոր փախստականներ. հիւանդ երեխաների համար ուղարկվում են ֆուրգոններով հաց։ Կարաօրգովում, Իգդիրում բացված են բժշկա-սանիտարական և սննդական կէտեր»։

—

Մանազկերտի փախստականները՝ թւով 50,000 հոգի՝ տեղաւորվում են Էջմիածնի շրջանի գիւղերում։ Սուր կարիք կայ հացի, բեռնակիր ձիերի, [illegible] գործողների։ Կոմիտէն գործում է Էջմիածնի հետ համերաշխ, աշխատանքը սաստիկ ծանր է։

ՄԻ ԹՈՒԱՑԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

—

Պատահեց ինձ կարդալ այս օրերս տեղական «Кавказское Слово» ի № 163-ի էջերում լրագրական մի տեսութիւն մեր գրականութեան մասին, գրված՝ պատերազմի առիթով։ Յօդուածագիրն է Վ. Մենակ, որ մի ընդհանուր ակնարկ է գցել հայ գրականութեան զարգացման վրա։

Ուրախալի փորձ,—կասեմ ամենից առաջ.—պէտք է շնորհակալ լինել պ. Մենակին, որ ռուս հասարակութեան համոզել է ուզում, թէ հայ ազգն էլ ունեցել է փառաւոր անցեալ, ունի և ապագայ։

Սակայն չափից ծանր և ուժից վեր մի խնդրի է մօտեցել պ. Մենակը։

Ճիշդն ասած, որքան էլ յոռետես լինեմ մեր գրական բարքերի վերաբերմամբ, ուզում էի այնու ամենայնիւ հաւատալ, որ գոնէ ռուս թերթի էջերը կարելի էր զերծ պահել միտումնաւոր յօդուածներից։

Բայց ինչ է ասում պ. Մենակ։

Նա խօսում է Աբովեանի, Րաֆֆիի, Պատկանեանի, Նալբանդեանի, Շահազիզի և այլ ազգային համարված գրողների մասին, համարում է նրանց Թիւրքահայ խնդրի գաղափարական արծարծող առաքեալներ։

Դրանց շարքին չի մոռանում դասել Ահարոնեանին, Յովհ. Թումանեանին, Ծատուրեանին և Փափազեանին։

Ի՞նչ նոր բան։ Իրօք ոչինչ։ Պ. Մենակից առաջ շատ են գրել Աբովեանի, Րաֆֆիի, Պատկանեանի մասին։ Իւր. Վեսելօվսկին, օրինակ, մի շարք գեղեցիկ թարգմանական նմուշներ է տուել մեր նոր գրողներից։ Իսկ երբ մի քննադատ, որ երևան է գալիս մեր օրերում, այն էլ ձգտում է գուշակել թէ պատերազմը ինչ նոր հոսանքներ կարող է բերել հայ գրականութեան մէջ, այն ժամանակ ես պարտք եմ համարում ասել և յիշեցնել, որ եթէ չէք մոռանում նոր «տենդենցիօզ», ազգային (աւելի ճիշդ կը լինէր, եթէ ասէինք ազգայնական) հոսանքը և այդ հովի գրողներին, նոյն թափով—թէկուզ հակառակ տեսակէտով—հարկաւոր էր մօտենալ և նորագոյն հոսանքի ներկայացուցիչներին։

Մինչդեռ Մենակը այդ առիթով ասում է. «Վերջին 10—15 տարին երևան չէ եկել և ոչ մի փայլուն անուն»։ Միայն մի բաղդաւոր բացառութիւն համարում է Վ. Տէրեանին։

Գուցէ այդ յօդուածի մէջ քննադատական տոնը բարեկամական է և խիստ մեղմական, հեռու ընդունված էթիքայից. այդ էլ ուշադրութեան չէր առնի, եթէ Մենակի ասածների մէջ երևան չը գար քննադատի անկեղծ միտումների բացակայութիւնը։

Խիստ տենդենցիօզ և չափազանցված ազգասիրութիւնը այդ յօդուածի մէջ ակներև է։ Ես կը բերեմ այդ յօդուածի վերջին կտորը, որ ամենից նշանակալիցն է Մենակի տողերի մէջ, որպէսզի ընդգծեմ յօդուածագրի մակերեսային դատողութիւնները։

«Դրանց գրուածների մէջ (անուններ չը կան, բայց խօսքը վերաբերում է վերջին տասնամեակին երևան եկող գրողներին) հայի տանջանքները, ցնորքները և իղձերը տեղի են տուել ընդհանրապէս կուլտուրական մարդու (ընդգծումը Մենակինն է) ցնորքներին և երազանքներին։ Առաջ էլ հայ գրականութիւնը իր ծոցում ունէր ոչ միտումնաւոր, քաղաքական ուղղութեան փայլուն ներկայացուցիչներ՝ օրինակ Շիրվանզադէն. սակայն այժմ գրողների մի ամբողջ սերունդ (ընդգծումը իմն է) կտրում է իր կապը նախորդների տրադիցիաներից և կապակներից ու առաջ գնում նոր ուղին։

Շատ կարելի է, այդ նոր սերունդ կազմող երիտասարդ գրողները, շնորհիւ արուեստագէտին յատուկ հոտառութեան, կարողացել են նախատեսել ազգի ապագայ վիճակը և պատրաստվել նոր կեանքի ու նոր երգերի։ Զի որ ներկայ համաշխարհային արեան և արցունքի հեղեղը պիտի ողողէ և քշէ անցեալի բոլոր անարդարութիւնը և ազատէ մեզ դարերի մղձաւանջային ժառանգութիւնից՝ հայ-թիւրքական խնդրից և բերէ նոր զարաշրջան հայ ազգի կուլտուրական զարգացման պատմութեան մէջ»։

Անպայման,—կասենք մենք։ Բայց չը կայ անկեղծութիւն այն խնդրի լուսաբանութեան մէջ, որտեղ բացակայում է հետևողականութիւնը և իրերի առարկայական ըմբռնումը։ Իսկ այդ հանգամանքը ոչ միայն չէ լուսաբանում երևոյթները, այլ ասածներն էլ հաւասարեցնում է Գիւլնազ տատի հէքիաթներին, որոնք կարդացել ենք միմիայն միամիտ թոռնիկներին ագահօրէն։

Մինչդեռ ռուս հասարակութիւնը և ռուս քննադատ միտքը այն աստիճան հասունացած է ներկայիս, որ Գիւլնազ տատի հէքիաթները լսելով պէտք է ասէ. «Ուրեմն հայ ազգը, որ ձգտում ունի կուլտուրական համարվելու, վերջին 15 տարին ոչինչով չէ շարժվել իր տեղից և չի երևան բերել ոչ մի գրող, որ թարգմանը հանդիսանար վերջին տասը տարվայ վերապրումներին։ Ուրեմն հայ մտքի վրա ոչ մի հետք չե՞ն թողել նոյն իսկ 1905 թ. ազատագրական շարժումները, և հայերը շարունակում են ոգևորվել նոյն գրողների ստեղծագործութեամբ, որոնք անուն են հանել 40—50 տարի առաջ»։

Բայց ներեցէք, Մենակի գրչի տակից դուրս են պրծել այսպիսի տողեր.

«Այժմ առաջին անգամ գրողների մի ամբողջ սերունդ կտրում է իր կապը նախորդ սերունդների տրադիցիաներից և կապակներից»։

Մինչդեռ քիչ վերև գրել է.

«Սկսած Աբովեանից մինչև մեր օրերը հայ գրականութիւնը մնացել է հաւատարիմ (ընդգծումը իմն է) մեծ հայրենասէր Աբովեանին»։

Համարելով այդ անհետևողական մտքերը Մենակի անփորձութեան մի վրիպում, մօտենանք խնդրին այլ կէտից։

«Գրողների մի ամբողջ սերունդ գնում է այլ ուղղութեամբ»,—ասում է Մենակ, և այդ ասելով հանդերձ մի ամբողջ սերունդի մէջ չէ գտնում և ոչ մի անուն, ոչ մի ներկայացուցիչ՝ արժանի ուշադրութեան, և բաղդի ու պատւի արժանացրել է միմիայն Տէրեանին։ Չը ժխտելով Տէրեանի արժանիքը, կուզէի հարց տալ. միայն Տէրեա՞ն է, այն ժամանակ ինչպէ՞ս հաշտեցնենք մի ամբողջ սերունդի երևան գալը։

Բացի այդ. եթէ մինչև օրս շարունակում են իշխել Ահարոնեան, Փափազեան և Թումանեան, ուրեմն որտեղից գտաք մի նոր սերունդ և նոր հովեր։

Մինչդեռ ակներև երևոյթ է, որ վերջին 10 տարին հայ գրականութեան մէջ երևան են եկել յայտնի կերպով նոր հոսանքներ, որոնք տուել են գրական արժէքաւոր գըրուածքներ բոլոր ճիւղերում՝ բանաստեղծութեան, վիպագրութեան, թատրոնի, հրապարակախօսութեան և մանաւանդ քննադատութեան մէջ։ Այդ մի շարք նոր գրողները ոչ միայն կապ չունեն նախորդ շրջանների ազգայնական գրողների հետ (Շիրվանզադէին թողէք հանգիստ), այլ և ակներև կերպով երևան են բերել նոր վերապրումներ և հայի ազատագրման խնդիրը տեսել են այլ մակարդակի վրա։ Այդ գրողներն ունեն իրանց ընթերցողների շրջանը, դրանց գրածների մէջ միայն «կուլտուրական» մարդու անձնական վերապրումներ չեն երևան բերվել, այլ ամբողջ խաւերի յոյզեր, ապագայ տենչեր, հասարակական հակադիր յարաբերութիւնների լուսաբանութիւններ։ Եթէ այդ գրողների մէջ գերակշռող է պօլեմիկական ճիւղը, դա հասկանալի է, քանի որ եւրոպական առաջնակարգ ազգերի մէջ էլ պօլեմիկան է ամենից առաջ ճանապարհ հարթել նոր գաղափարների համար, և պօլեմիկան համարվում է գրականութեան մէկ շատ պատուաւոր ճիւղը։

Ես չեմ բերի անուններ, կը յիշեմ միայն մի քանիսին. բանաստեղծութեան մէջ Յակոբեան, դրամայի՝ Ա. Վարդանեան, հրապարակախօսութեան և քննադատութեան մէջ Խանզադեան և մի շարք այլ անուններ, որոնց կարող էք հանդիպել «Գարուն» ամսագրում և առանձին հրատարակութիւնների մէջ։ Ճիշդ է, սրանք թւով շատ չեն, բայց միթէ թւի մէջ է բանը. 10 տարին էլ շատ չէ։ Յետոյ՝ հետաքրքրական է իմանալ, թէ պ. Մենակի թւած անունները ի՞նչ նոր բան են տուել վերջին 10 տարվայ մէջ։ Ի՞նչ են գրել, օրինակ, Ահարոնեանը, Փափազեանը, Յ. Թումանեանը... Իսկ «Հին Աստուածների» հեղինակը, որ այդքան աղմուկ հանեց վերջին տարիները, ինչպէ՞ս է վրիպել պ. Մենակի մտքից... Եթէ նրան ասենք՝ դասել է Թիւրքահայ գրողների շարքը, մի մարդու՝ որ իր ուսումով և դաստիարակութեամբ պարտական է ռուսահայ, այդ ինչպէ՞ս է, որ Ծերենցը մտել է ռուսահայոց գրողների շարքը։

Ճիշդ է, այդ գրողները պ. Մենակի համակրած հոսանքի ներկայացուցիչները չեն։ Ո՛չ Յակոբեան, ո՛չ Կուրղինեան, Ա. Վարդանեան և մանաւանդ Յ. Խանզադեան (չեմ բերում ուրիշներին) նրա տեսութեան համապատասխան չեն, բայց լաւութեամբ անցնել այդ գրողներին և նրանց հոսանքը, դրանով ոչ միայն չի նշանակում հայ ազգի կուլտուրական զարգացման նախանձախնդիր լինել, այլ մի տենդէնցիօզ, միտումնաւոր լուսաբանող, որի համար ո՛չ թէ նշանակութիւն ունեն գրական արժէքները, նրա զարգացումը, որակը, այլ միմիայն անձինք, անձինք և անձինք...

Իսկ այդպիսի պաշարով հրապարակ գալ, այն էլ ռուս հասարակութեան առաջ դա, ըստ մեզ, լուրջ և հետևողական գործ կատարել չէ։

Յ. Սոլոլեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Լուրեր Սղնախից

Սղնախ, 24 յուլիսի

Սղնախում հրատարակվող «Խմա Կախէթիսա» լրագիրը դադարեց լոյս տեսնելուց, որովհետև խմբագիր Կ. Տղավաձէն կանչվեց զինւորական ծառայութեան համար։ Նա պաշտոնաթող օֆիցէր է։

Իր թերթի վերջին համարում Տղավաձէն հրաժեշտ էր տալիս ընթերցողներին, թւելով իր ծառայութիւնները, որ նա մատուցել է վրաց ժողովրդին, քաղաքին և գիւղերին։

Սաքօբօ գիւղի բնակիչները Ծիաուրի անտառում ունէին 600 դեսեատին վիճելի անտառ։ Վրաց իշխանները այդ անտառը իրանցն էին համարում և նոյն իսկ պայմանաւորվել էին այդ անտառը ծախել Պետրօգրադի հրէաներին ձեռնտու պայմաններով։ Գիւղացիները բողոքեցին։ Թիֆլիսի Նահանգական վարչութիւնը գործը վճռեց յօգուտ Սաքօբօ գիւղի բնակիչների և 600 դեսեատին անտառը մնաց Սաքօբօ գիւղի բնակիչներին, որպէս սեփականութիւն։ N. N.

—

Խնձքենդի իրականութիւնից

Խնձքենդ, 21 յուլիսի

Կեանքը մեզանում անցնում է խիստ տաղտկալի և ձանձրալի։ Մխիթարական ոչինչ չը կայ. անկենդանութիւնը կատարեալ է։ Բացի մի քանի ուսուցիչներից՝ ժողովրդի մեծամասնութիւնը տնքում է կեանքի ծանրութեան տակ։ Ամէն ինչ թանգ ու անմատչելի է դարձած. հացի ֆունտը 7 կոպ., տեղական ալիւրի պուդը 2ր. 60 կ., շաքարի ֆունտը 23 կոպ., իսկ ուրիշ կենսական մթերքները չունևոր դասակարգի համար միանգամայն անմատչելի են, այնքան թանգ են։

Ամառանոցաւորներ այս տարի քիչ են գալիս մեզ մօտ. պատճառը հաւանօրէն եղանակների անհաստատ լինելն է։ Այս տարի թուրք բէգեր չեն եկել. նրանք էլ ըստ երևոյթին գերադասել են Շուշին, թղթախաղութեան և այլ «զուարճութիւնների» համար ընկերակիցներ շատ կան։

Տեղիս ծխ. դպրոցը առաջիկայ ուսումն. տարին բացվելու յոյսը դրված է օտարութեան մէջ ապրող խնձքենդցիների վրա, որոնք անշուշտ չը պէտք է զլանան դպրոցին նիւթական օգնութիւն հասցնել։ Հոգաբարձութիւնը դպրոցին նպաստ տալու համար դիմել է Կ. Հ. Բ. Ընկերութեան խորհրդին, որը սակայն մինչև այժմ չէ պատասխանել։

Ա. Ս.

—

Փոխադարձ վարկի ընկ. ժողովը

Նոր-Բայազէտ, 22 յուլիսի

Վերջերս կայացաւ տեղիս փոխադարձ վարկի ընկ. հերթական ժողովը 50-ից աւելի անդամների մասնակցութեամբ և պ. Ռ. Աղասեանի նախագահութեամբ։ Օրակարգի խնդիրներն էին՝ տարեկան հաշուետւութիւն 1914 թ. համար, ընկերութեան նախագահ հանգ. Յակոբ Ալիխանեանի փոխարէն նոր նախագահի ընտրութիւն, այս տարվայ ծախքերի նախահաշիւ, ընկ. վարչութեան գանձապահի ընտրութիւն և այլն։

Ընկ. վարչ. նախագահ ընտրվեց պ. Սա. Բաղիկեան, իսկ գանձապահ վերընտրվեց Վ. Բուդաղեան։ Վերստուգ. յանձնաժողովի զեկուցումից երևաց, որ անցեալ տարի ընկերութիւնը նախահաշւից մի փոքր աւելի ծախքեր է ունեցել՝ արտաքոյ կարգի հանգամանքներից առիթված, իսկ տարեկան շրջանառութիւնը հասել է մի պատկառելի գումարի, թէև զուտ աշխատանքը չէ ծածկել ընկերութեան ծախքերը, ուստի փայերի վրա 1—2% վնաս է եղել։

***

ՄԵՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԵԱՆՑ ԹԱԳՈՒՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

I

Թիֆլիսի Հայ Գիւղատնտ. և Տնայն. Ընկերութեան այս օրերուն ձեռնարկած շահեկան աշխատութիւնը՝ ի նպաստ Կովկասի մեր անմխիթար հայ գիւղացիութեան՝ անշուշտ ամենէն ծանօթ [illegible] մին է։

Նոյն ձեռնարկը, որ սկսած է դիմումներով՝ առ հայ ուսուցչութիւնն ու ուսանողութիւնը, բնական է, որ իբրև հասարակական գործ մեր մէջ իր հաւնողներն ու չհաւնողները պիտի ունենայ։

Մենք՝ առանց շօշափելու այդ կէտերը՝ այստեղ ըստ կարելւոյն պիտի պարզենք նոյն կարգի ձեռնարկներէն առաջ գալիք այն բարիքները, որոնք աշխատող ընկերութեանց ուղղակի նպատակէն ալ կրնան դուրս ըլլալ։

Վերոյիշեալ ընկերութեանց հրաւէրին և ուղարկումին համեմատ՝ այժմ բաւական թւով՝ առ հասարակ մտաւորական դասակարգի անհատներ՝ առոյգ ու պատանի սրտերով միասին կօգնեն մեր գիւղերէն դաշտային գործին։

Անոնք՝ մեծ մասամբ ուսուցիչ և ուսանողներ, որ ամէն օր իրենց դասարանին մէջ յիշեցած էին բնութիւնն ու գեղեցիկ համայնապատկերը գիւղական կեանքին, անոր իսկ այդ կեանքին մէջն են։ Քաղքենի ճնշող կլիմային՝ նոյնքան զգացումները ճնշող [illegible] տեղ՝ ամէն օր՝ իրենց համար կը ծագի մեծատարած դաշտին կամ լեռնաշղթային շնչող արեգը։ Հոն աշխատութեան իրենց եղանակը շատ պարզ ու ֆիզիքական է, ինչ որ յարատև մտաւոր ճիգերով լարուած անհատներու խմբակին՝

Ալիի և ընկերների սերմանած պանիսլամական քարոզութիւնները այնքան խոր արմատներ են տարածել ազգաբնակութեան սրտում, որ ինչպէս իր բռնութեան համար գլորվեց Կարմիր Համիդը, այդպէս էլ իրանց կամապաշտութեան և կուսակցական մոլութեան համար պիտի գլորվեն իթթիհադականները, իրանց հետ կործանելով Թիւրքական հարստութեան այս վերջին բեկորները։

Էրզրումի ազգաբնակութիւնը ոչ միայն ցոյցեր սարքեց, բողոքներ բարձրացրեց տևտօնների գայթակղութիւնների դէմ, այլ նա մամուլի մէջ էլ խիստ քննադատեց իթթիհադականների ձգտումները և Վիլհէլմի խաբուսիկ խոստումները, բայց էնվէրներն այնպէս էին բորբոքված, որ խեղդեցին Էրզրումի վիլայէթի Թիւրքերի ձայնը։ Թէև հալածվեց, թէև տանջվեց, թէև անարգվեց և տոյժերի մատնվեց Էրզրումի ազգաբնակութիւնը, բայց նա իր տրամադրութիւնը ոչ միայն չը փոխեց, այլ աւելի սաստկացրեց։ Ոչ միայն յօժար կամքով չը գնաց պատերազմի դաշտ, այլ տենչեց որ ընկճվեն էնվէրականները, որպէս զի ազատվեն Կ. Պօլսի մէջ բուն դրած կենտրոնացման ծառայող բռնակալների ճիրաններից։

Նոյնիսկ այս յունիս ամսին, երբ Կ. Պօլսի կենտրոնականների կաբինետից հրաման հասաւ, որպէսզի Էրզրումի հայ բնակիչներին բռնութեամբ Միջագետք քշեն, Էրզրումի Թիւրք ազգաբնակութիւնը իր խոհուն տարրերով դիմադրեց այդ հրամանին և թոյլ չը տուեց գործադրելու։

Իթթիհադականները պատերազմի սկզբին—նոյեմբերի վերջերին—պաշտօնանկ արին Էրզրումի վալի Ահմէդ-Րէշադին, որ մի սիրելի էր, խիստ հակառակորդ իթթիհադականների կենտրոնացնող գաղափարներին։ Ահմէդ-Րէշադը պարտաւորված էր հեռանալու, իսկ պատերազմի պարագաներն այնպիսի վիճակ էին ստեղծել, որ Էրզրումի իթթիլաֆականները չը կարողացան կառավարութեան դիմադրել և իրանց սիրելի վալիին պահպանել։

Նրան յաջորդեց նախկին Վանի վալին՝ Թահսին-բէյը, որը թէև իթթիհադականներին մօտ է, բայց հայասէր քաղաքականութիւն ունի, ձգտում է ազգաբնակութեան մէջ պահպանել համերաշխութիւն և խաղաղութիւն։ Երբ նոյն յունիս ամսին հրաման եկաւ հայերին Էրզրումից քշելու, վալին հրաւէր կարդաց մուխթարներին՝ ժողովրդին, որ ամեն մարդ իր հաշիւները մաքրէ հայերի հետ, որպէսզի անարգել կարողանայ հայերին ճանապարհ գցել դէպի աքսորավայր։

Թիւրք ազգաբնակութիւնը իր ամբողջ դասակարգերով ներկայացաւ վալիին, բացատրութիւն խնդրեց և, այդ լսելուց յետոյ, երեք օր շարունակ ժողովներ ունեցաւ, թէ ինչ ընթացք բռնէ։ Երրորդ օրը ազգաբնակութեան ներկայացուցիչները, իրանց առաջնորդ ունենալով Մոլլա-Մէհմէդ Թէֆֆիկ-բէյին, ներկայացան վալիին և ասացին, թէ իրանք Էրզրումի Թիւրքերը վճռել են հայերի հետ աքսոր գնալ, ուր որ նրանց տանեն։ Հակել որ չը կտորեն հայերին, քանի որ այդ հայերից ամեն մէկը մի քանի մուսուլման դրացիների հետ հաշիւներ ունի, հարիւրներով ու հազարներով պարտ ու պահանջ ունեն և նրանց կեանքի գոյութիւնից կախված է նրանց պահանջների գանձումը կամ ջնջումը։

Վալին զգաց, որ Թիւրք ազգաբնակութիւնը կատակ չի անում, նա լըջութեամբ խորհել էր իր ծրագիրը և գործադրելու մասին կազմել էր ուրուագիծը։ Երբ զգաց վալին, թէ հասարակական այդ որոշումից ինչ դժբաղդութիւններ կարող են ծագել, նա պարտաւորված ընդդիմացաւ Կ. Պօլսի իթթիհադականների լիդերների և Էնվէրի վճռին. իսկ հայերը մնացին քաղաքում մինչև այսօր։

Ատրպետ

հաճոյք կը լլայ աւելի՝ քան գործ, նկատի ունենալով մանաւանդ աշխատութեանց ազնիւ նպատակին քաղցրութիւնը։

Բոլոր այս բարոյական հաճոյքներուն վրայ կաւելցնեն ոմանք՝ մեր գեղջուկներուն առատաձեռնութեան համեմատ՝ օգնութեան փութացողներուն վայելելիք թարմ ու համեղ կերակուրները... Թէև ոմանք ալ ասոր հակառակը կը պնդեն, թէ շատ տեղեր արշաւախումբը սոված պիտի մնայ, այնքան որ թանգութիւն կայ՝ և մասամբ կը պակսի գեղջկական հին՝ ճոխ սեղանասարքումին բարի սովորութիւնը։

Իսկ բոլոր անոնք, որ այս տողերը գրող ձեռքին պէս՝ ամիսներով կիզող արևին տակ գիւղատնտեսական գործիներ թրջած են իրենց արիւն-քրտինքով, և կամ էապէս տարած են գիւղական կեանքին դառնութիւնները նաև, լիովին անձնուիրութիւն պիտի ունենեն յիշել արշաւախմբերուն աշխատութեանց մէջ, որոնց կրնայ փոխարինել միմիայն եղբայրական պարտաճանաչութեան վեհ զգացումին քաղցրութիւնը։

Իսկ՝ այս վերջին պարագան է, որ ճշտել կուզէինք, թէ իր բարոյական դերին մէջ պիտի ունենայ որոշ արդիւնքներ։ Ահա թէ ինչպէս։

Չէ մի որ ամեն տեղ գիւղացիի և քաղաքացիի փոխադարձ խորթ ակնարկումներ կան երբեմն։

Ո՞վ չի լսեր մեր գեղջուկներուն բերնէն յաճախակի քրթմնջոցները, թէ բոլոր քաղաքացիներս և քաղաքացիի պէս ապրող պաշտօնեաներս միայն նստող և հանգստօրէն հրահանգող ու խօսողներ ենք, մորթերնուս վրայ ոևէ ցաւ չենք կրնար տանիլ, անօթի չենք կրնար մնալ, փափկակեաց ենք, ևայլն։

Ո՞վ չի լսեր հապա փոխադարձաբար քաղքենի շրջանակներուն մէջ գիւղական կեանքին հանդէպ արհամարհոտ խօսուածքներ, նոյն կեանքին գիւղակեաց և պարզ ըլլալուն առթիւ յախուռն տրամաբանութիւններ։

Չէք տեսած բուլվարէ մը կամ հրապարակէ մը անցնող քօլօզաւոր ու անբրտի շինականը ակնապիշ դիտելնիս, որ նոյնիսկ կը շուարեցնէ խեղճը։ Ու մեզնէ շատերը՝ շատ տգէտ կը կարծեն արտաքին տգեղութեան տակ ծածկուած գեղջուկ եղբայրները, որոնք մարդկային ընկերութեան ծառին արմատներն են հողին մէջ խրուած։ Եւ երբ պատահի, որ մենք ալ լոկ հաճոյքի համար իրենց մօտ գիւղ կերթանք ու կը զմայլինք առուին եզերքը արածող հօրթին վրայ, կամ ծովածաւալ արտօրէից նայելով բերաննիս բաց կը մնայ, և ապա յանկարծ տղայանալով թիթեռնիկներ կը հալածենք... կը զգա՞նք արդեօք, թէ նոյն վիճակը որքան խեղճուկ թեթևներ կ'երևինք շինականին աչքին ու ծաղրին նշաւակ կը դառնանք։ Գիւղացին՝ շատերու կարծածէն շատ աւելի ծանօթութիւններ և հմտութիւն ունի, միայն թէ անկերպարան վիճակի մէջ։

Այս բոլոր փոխադարձ անհասկցողութեանց և խորթութեանց միջև ամուր կամուրջ մը ըլլալ կը տեսնեմ այս պահուն՝ մեր գիտակից դասակարգին դէպի գիւղերը օգնութեան փութալու գործունէութիւնը։

Հոն՝ գեղջուկը աչօք բացօք կը տեսնէ իրեն բարօրութիւն քարոզող փափուկ մարդիկը, որ իրեն հետ իրեն գործին մէջ, ի սէր եղբայրութեան, իրենց կազմին անյարմար եղած դժուարութիւններու սիրայօժար կը տոկան։

Իրաւ որ, եթէ արշաւախումբը չկրնայ ֆիզիքապէս կատարեալ օգտակարութիւն մը առաջ բերել, վստահ եմ, որ իր արծարծած եռանդը և իրերաօգնութեան քաջալերութիւնը նուազ դեր չէ, որ պիտի կատարէ։

Մանաւանդ այս վայրկեանին, ուր Կովկաս կը հասնին օրէ-օր անհատնում՝ մեր Թիւրքահայ դժբաղդ փախստականներու կարաւանները։

Ո՞վ պիտի հիւրընկալէ, ո՞վ պիտի պահէ նորէն զանոնք, եթէ ոչ Կովկասի մեր ազնիւ գեղջուկ եղբայրները, որոնք սակայն այնքան պէտք ունէին ինտելիգէնտ քաջալերողներու, որ ահա հոն պատրաստ են։

Իսկ պատանի ուսանողները և ուսումնասէրող ուսուցիչները, որոնք մեծ մասամբ հեռուէ հեռու կը կարդային հայ գիւղացիութեան կեանքն ու անոր քաշած դժուարութիւնները, այժմ այդ միևնոյն կեանքին իրենք 1—2 ամիս ենթակայ մնալով՝ հետերնին պիտի վերադարձնեն այնքան մօտէն քաղուած խորունկ պիտանի ուսումնասիրութիւններ, որոնք անհրաժեշտօրէն պիտանի են հայ վարժապետին դասախօսութեան՝ և հայ ուսանողին՝ դաստիարակուելուն համար։

Օգնել և օգտուիլ, գործել և ներգործուիլ —այս է կարծեմ իրական կեանքը, որ անթառամ է, յարածուն է։

II

Նախորդ յօդուածներէս մէկուն մէջ շեշտած էի, թէ նոր գրաւուած Հայաստանի արիւնլուայ հողամասերուն վրայ, օգնելու գործին պարապելու համար, աւելի հեղինակաւոր ու փորձուած մարդիկ որքան շատ ունենանք, այնքան լաւ է։ Անաչառօրէն խօսելով՝ չեմ գիտեր թէ ո՛ւէ տարակոյսի տեղիք մնա՞ց այլ ևս։ Նայելով «Մշակի» այս օրերս հրատարակած հեռագիրներուն, թէ մասնաւորապէս պ. Հ. Առաքելեանի և միւս ընկերութեանց տարբերեց ներկայացուցիչներու ներկայութիւնը Կարաքիլիսէի կողմերը անհուն բարիք մը եղաւ մեր դժբաղդ փախստական եղբայրներուն համար։ Այդ բարիքները թուելու տեղ՝ կը խնդրեմ ընթերցողներէն ուշի ուշով կարդալ նոյն հեռագիրները («Մշակ» № 158)։

Պարոնայք Առաքելեան, Շարաֆեան, Պապեան, Վարդանեան և այլն չէին գացած անշուշտ՝ ուղիղը խօսելով՝ զինուորական իշխանութեանց մօտ կենսական միջնորդութեանց համար և կամ Վեհ. Կաթողիկոսի հովանաւորութեան տակ միութիւնը զօրացնելու համար և այլն։

Սակայն գործը այնպէս բերաւ, որ այդ փորձ՝ և աշխարհի կեանքը իրապէս ճանչցած մեր մարդիկը իրարու խօսք հասկցնելու համար համախմբուեին...։

Եւ ահա մենք վստահ ենք, որ համախմբումները կը ծնին բարիքներ՝ մեր ազգային ներկայ խղճալի կացութեան համար դարման մը գտնելու գործունէութեան մէջ։

Մեր ձեռնարկութեանց ծրագիրներէն դուրս եղած օգուտներն են ատոնք։

Գաղթական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Օգոստոսի 9-ին նշանակված է եկեղեցական թափոր դէպի Հալաբար, ուր Կախետինսկայա փողոցում պէտք է կատարվի մաղթանք ռուս զօրքին յաղթութիւն շնորհելու համար։

◆ Քաղաքների միութեան կովկասեան բիւրօն գլխաւոր կոմիտէտից Մոսկվայից ստացաւ 1 միլիօն ռուբլի՝ միութեան կովկասեան ճիւղի հիմնարկութիւններին բաժանելու յուլիս և օգոստոս ամիսների ծախքերի համար։ Անցեալ օրը կայացաւ ճիւղի բիւրօյի նիստը այդ գումարը քաղաքների միջև բաժանելու համար։

◆ Նաւթի պահեստատէրերը դիմել են Թիֆլիսի նահանգապետին, միջնորդելով որ աւելացնի նաւթի սակագինը։ Իրանց դիմումը պատճառաբանելու համար, նրանք խնդրի հետ ներկայացրել են նաև Բագուի բօրսային բիւլլետէնը, որ վկայում է նաւթի գների աճման մասին։ Նաւթավաճառների միջնորդութիւնը նահանգապետը յանձնել է քաղ. վարչութեան հայեցողութեան։

◆ Թիֆլիսի մսավաճառները դիմել են նահանգապետին և քաղ. վարչութեան, որ մսի սակագինն աւելացնի։ Այս դիմումը այս օրերս կը քննի դումայի տնտեսական յանձնաժողովը։

◆ Ժողովրդական դպրոցների վերատեսչի կարգադրութեամբ դպրոցական պարապմունքները քաղ. տարրական դպրոցներում պէտք է սկսվեն օգոստոսի 17-ից։ Այդ դպրոցների աշակերտները տեղում պէտք է լինեն օգոստոսի 10-ին։

◆ Յուլիսի 28-ին, Նաւթլուղի դասաւորող հիւանդանոցից քաղաքի լազարէթները փոխադրվեցին 250 հիւանդ և վիրաւոր զօրականներ։

◆ «Բլօցէկ և կոմպ.» ընկ. առաջարկում է Թիֆլիսի զինուորա-արդիւնաբերական կոմիտէտին իր սառցագործարանի ծառայութիւնները։ Այդ գործարանը օրական պատրաստում է 700 պուդ սառոյց։ Սառոյցը մինչև հոկտ. 1-ը պուդը առաջարկվում է 50 կոպ., իսկ 1-ից յետոյ գները կիջեցվեն։

◆ Քաղ. վարչութեան անդամ Միք. Աթաբէկեան քաղ. վարչութեանն է ներկայացրել այն ծառայողների ցուցակը, որոնց ռոճիկները, թանգութեան պատճառով, պէտք է աւելացվեն ամիսը 5-ական ռուբլով։

◆ Թիֆլիսի 1-ին առևտրական դպրոցում ընդունելութեան քննութիւնները նշանակված են օգոստոսի 20—28։

◆ Անդրկովկասի շէյխ-ուլ-իսլամը և մուֆթին դիմել են Թիֆլիսի արքունական և հասարակական հաստատութիւններին, խնդրելով մուսուլման ծառայողներին ազատել պարապմունքներից Օրուզ-բայրամի օրը, յուլիսի 31-ին։

◆ Ստացել ենք Զաքաթալայից՝ գիմնազիստ Բաբգէն Բէկ-Յովսէփեանից 1 ռուբ.՝ յանձնելու ներկայումս հիւանդ պառկած Գրիգոր Բալասանեանին։

ԿՈՎԿԱՍ

◆ Որպէս նպաստ Փօթիի արական գիմնազիայի՝ ամառվայ ամիսների համար, փոխարքան Կովկասի ուսում. շրջանի հոգաբարձուի տրամադրութեանն է յանձնել 7162 ր. 47 կ.։

◆ Օգոստոսի 1-ից Քութայիսում լոյս է տեսնելու «Кутаисскія Вѣсти» անունով մի օրաթերթ։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պատգամաւոր Աջէմեանին հեռագրում են, որ Րօստովի լրագիրներին արգելված է տպել կոմս Բօբրինսկու ճառը, որ արտասանվեց Դումայում։

◆ Յունաց Թագաւորը Վենիզէլօսին յանձնարարել է կաբինէտ կազմել։ Յանձնարարութիւնը արվել է քառեակ համաձայնութեան ներկայացուցիչների յոյն կառավարութեան հետ խորհրդակցելուց յետոյ։

◆ Պետրօգրադից հեռագրում են, որ մօտ օրերս Պետ. Դումայի մի քանի անդամները նշանակվելու են նահանգապետներ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Ս. Նինայի լազարէթում երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց վրաց յայտնի բանաստեղծ Վաժա Պշաւելի (Լուկա Ռազիկաշվիլի)։ Հանգուցեալի մարմինը հիւանդանոցից փոխադրվեց Քաշվէթի եկեղեցին, ուր մնալու է մինչև կիրակի, այն է՝ մինչև թաղումը։ Թաղման համար կազմված է յատուկ յանձնաժողով։

◆ «Սախ. Փուրցելի» ասելով, պատգամաւոր Ա. Չխենկելին, փոխարքայի օգնական հոֆմէյստէր Պետերսօնի անունով ուղարկել է հետևեալ հեռագիրը. «33 500 հոգի քաղցած սամուրզականցիներ կարիք են զգում ևս 67,000 պուդ եգիպտացորենի։ Կառավարութիւնը համապատասխան միջնորդութիւն անելու դէպքում պատրաստ է օգնութիւն ցոյց տալ»։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր.	ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր.	երեկ.
№ 6 (արագ)	»	12 ժ. 8 ր.	ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր.	երեկ.
	» Ջուլֆա	8 ժ. 5 ր.	երեկ.
	» Բօրժոմ	3 ժ. 20 ր.	ցերեկ

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր.	ցերեկ.
№ 4	Բաթումից —	5 ժ. 55 ր.	երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր.	երեկ.
№ 10	Բաթումից —	9 ժ. 51 ր.	առաւ.
	Ջուլֆայից —	8 ժ. 11 ր.	առաւ.
	Բօրժոմից —	7 ժ. 25 ր.	առաւ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ПРИ ГОНОРРЕѢ

въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ

„АРМАТИНЪ" А. Я. АКУЛІАНЦА

для внутренняго употребленія. „Арматинъ" совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина" не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.

ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ" А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ" только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рец. вр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.

(հ. կ.) 174. 0—37

Լոյս տեսաւ

ԱԵԱՔՍ

«Ազգային-կուլտուրական աւտոնոմիայի մասին»։

Գինն է պոստի ծախքով միասին 30 կ.։

Դիմել՝ Тифлисъ, Г. И. Галустяну, Книжмагаз. «Гуттенбергъ». 501. 2—2

15 ԿՈՊԵԿ

քառ. սաժէնը, Թօխլէաուրի գիւղից 2 վ. հեռ. վրա, 2674 ֆ. ծովի մակերևոյթից բարձր, ծախվում է անտառամաս (սօսի, կաղնի, հաճարի, բոխի և այլն ծառերից բաղկացած) ամարանոցի համար։ Անտառամասի տարածութիւնն է 250 ք. սաժ. և աւելի։ Ունեցած ծախքերը կը ծածկվեն պատրաստված փայտից, իսկ գետինը կը մնայ գնողին համարեա ձրի։ Ծախվում են նոյնպէս քառ. սաժ. 15 կոպ. հողամասեր, բաղկացած 900 և աւելի քառ. սաժ., ընկերական պայմաններով այգի ձգելու համար։ Հողամասն ունի առատ ջուր և գտնվում է Սագարէջօ կայար. (Կախեթեան երկ.) 5 վ. հեռ., իսկ Թօխլիաուրկի պլատֆորմայից 2 վ. հեռ. վրա։ Կօջօրում, պօստային կայարանի մօտ, վերին խճուղու վրա ծախվում են ամարանոցի վայրեր՝ 300—1000 ք. սաժ.։ Տեղեկանալ՝ I Тумановская ул. № 13, Бухгалтерскіе курсы Теръ-Степанова. 460. 10—8

Ծախվում են

1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ՓԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ» նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և րէցէպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրիպէրով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրօնիքական տրիպէրի և բժշկութեան մասին, րէցէպտներով։ Գինը 50 կոպ.։

2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՒԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ, թունաւորութիւններ և նրանց շտապ օգնելը։ Բազմաթիւ տնային դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։

3) «ԾԻԾԱՂԻ ՏԿՃՈՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անեկդօտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ տկճորի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։

Այս երեք գիրքը միասին պահանջողներին

ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ

երկու հետևեալ գրքերը. 1) «Նիկարմանի շալվարը» ծիծաղաշարժ վօդեվիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.)։

Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. առաջուց ուղարկել անպայման պէրէվօդով։ (Մարկաներ չը գնել նամակներում, հակառակ դէպքում պատասխանատու չեմ ոչ մի կերպ)։ Հասցէ՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.

(հ.կ.) 311. 100—23

Սուխումի ծխական դպրոցի համար հարկաւոր է

ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ,

ՄԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ,

(ռուսերէն և թւաբանութիւն)

և երգեցողութեան

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ,

որը պէտք է կազմէ քառաձայն երգեցիկ խումբ (պատարագ և համերգ)։ Պահանջվում է փորձառութիւն։

Դիմել՝ Сухумъ, Попечительству Арм. школы.

(հ. կ.) 489. 3—3

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Յօգուտ «Մշակի» ֆօնդի հետևեալ գրքերը.

1)	«ՄՇԱԿ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ	գ. 1 ր.
2)	ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ	» — 30 կ.
3)	ԿԱՑԷՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Աւ. Առաքելեանի	» — 50 կ.
4)	ԲԱՌԱՄՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յոբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ)	1 ր.
5)	ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I	1 ր.

Վերոյիշեալ հրատարակութիւններից մի մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։ 2. 0—4

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

(Գոյութիւն ունի 1895 թւից)

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ

Դասընթացքը 4 ամսեայ՝ ամենօրեայ պարապմունքներով։ Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատանը—Թիֆլիս, Նիկօլայէվսկայա փողոց, № 22. Տէլ. № 7—44.

(հ. կ.) 487. 0—2

Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր Դպրոցի

համար հարկաւոր է ՎԵՐԱՏԵՍՈՒՉ, բարձրագոյն կրթութեամբ, առ նուազն երեք տարվայ մանկավարժական փորձառութեամբ, շաբաթական 6 դասով, տարեկան երկու հազար չորս հարիւր (2400) ռուբլի ռոճիկով։

Ցանկացողները կարող են դիմել դպրոցի հոգաբարձութեան մինչև առաջիկայ օգոստոսի 15-ը հանդերձ curriculum wital-ով։

(օ.մ.) 498. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ 3—2

Առևտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան հսկողութեան ներքոյ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ

ԵՐԿՍԵՌ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ

(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 34, տէլ. № 9—76.)

Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Ծրագիրներն ու կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատնից։

(կ. ե. հ.) 480. 0—6

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԻՆԺԵՆԵՐ

Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Բագու, Կրասնովօդսկայա փ. տ. Ասլան-Ուզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մոտորներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ույժին $^1/_2$ ֆունտ կամ 200 գրամմ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբիններ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիկս» ընկ. գործարանից։

Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։

Երկրագործական մեքենաներ՝ լոկոմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.

Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur

(հ.կ.) 551. 150—118

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.